
Մակրոտնտեսական իրավիճակը

2001 թվականի 3-րդ եռամսյակի և տարվա առաջին ինն ամիսների մակրոտնտեսական ցուցանիշները հաստատում են դրամավարկային քաղաքականության ծրագրի հիմքում ընկած այն դրույթը, ըստ որի՝ տնտեսական աճը պայմանավորվելու էր գլխավորապես համախառն պահանջարկի խթանող ազդեցությամբ: Ընդ որում, կարևորվել էր մասնավոր հատվածի դերի ամրապնդումը տնտեսական աճի և զարգացման գործընթացում, ինչը նկատվել էր դեռևս 2000 թվականին:

Ինն ամիսների արդյունքներով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, փաստացի տնտեսական աճը կազմել է 9.9%[*] ծրագրված 7.9%-ի, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ 103.8% ծրագրված 103.7 %-ի փոխարեն:

Արդյունքում, նախորդ տարվա առաջին ինն ամիսներին գրանցված 751.8 մլրդ դրամ ՀՆԱ-ի փոխարեն արտադրվել է 857.5 մլրդ դրամ անվանական ՀՆԱ՝ պայմանավորված անվանական ծախսումների (համախառն պահանջարկի) բարձր մակարդակով:



Մակրոտնտեսական միջավայրի որոշիչ գործոններից են, մասնավորապես, Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700 - ամյակի տոնակատարությունների հետ կապված՝ կապիտալի ներհոսքն ու արտաքին պահանջարկը: Համախառն պահանջարկի միտումները էապես պայմանավորվել են նաև դրա ներքին տարրերով, ինչը վկայում է տնտեսական աճի որոշակի ներուժի մասին: Նկատելիորեն ավելացել է մասնավոր հատվածի պահանջարկը և դրա հետ կապված՝ տնտեսական աճի ձևավորման գործում մասնավոր հատվածի դերը:

Այս պայմաններում սղաճի ցուցանիշները առաջին երեք եռամսյակների ընթացքում և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, միջին արտահայտությամբ համապատասխանաբար կազմել են –0.8% և 3.4%՝ ծրագրված 1.3%-ի և 3.1%-ի փոխարեն: Սղաճի ցուցանիշի բացասական մակարդակը պայմանավորված է դիտարկվող ժամանակահատվածում սպառողական շուկայում սպասվածի համեմատ վառ ընդգծված սեզոնային առանձնահատկություններով:

Այդուհանդերձ, դրամավարկային քաղաքականության առումով հուսվար – սեպտեմբեր ժամանակաշրջանի կարևորագույն առանձնահատկությունը համախառն պահանջարկի, տնտեսական աճի ու ՀՆԱ դեֆլյատորի մակարդակի՝ ընդհանուր ծրագրային ակնկալիքների իրականացումն է, թեև միևնույն ժամանակ իրականացան և շարունակում են պահպանվել մակրոտնտեսական միջավայրի որոշ ռիսկեր՝ կապված սղաճի ցածր մակարդակի և պետական բյուջեի թերակատարումների հետ:

[*] *ՀՆԱ իրական աճի և ՀՆԱ դեֆլյատորի ցուցանիշները ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001թ. հունվար-սեպտեմբերին» պարբերականի նախագծից են:*

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Համախառն պահանջարկի դրսևորած միտումների հետ մեկտեղ որոշակի տեղաշարժեր են գրանցվել դրա կառուցվածքում:

Հիմնական մակրոտնտեսական համամասնությունները 2001 թվականի հունվար – սեպտեմբերին* (%)

Ցուցանիշը	Ծրագրային իրական աճը	Փաստացի իրական աճը	Նպաստումը ՀՆԱ աճին
Սպառում	5.5	5.9	6.4
Պետական	6.3	-1.0	-0.1
Մասնավոր	5.4	6.4	6.6
Կապիտալ ներդրումներ	15.7	8.3	1.5
Պետական	37.1	10.2	0.3
Մասնավոր	11.8	7.8	1.2
Զուտ արտահանում	-4.0	15.2	4.2
Արտահանում	16.9	16.4	3.9
Ներմուծում	10.4	-0.7	0.4
Վիճակագրական շեղում	-	-	2.2**
ՀՆԱ	**7.9**	**9.9**	**9.9**

ՄԱՍՆԱՎՈՐ ՍՊԱՌՄԱՆ իրական աճը տարվա առաջին ինն ամիսների ընթացքում կազմել է 6.4%՝ ծրագրված 5.4%-ի փոխարեն: Դրա համար որոշիչ գործոն է հանդիսացել մասնավոր հատվածի կողմից տնօրինվող եկամուտների աճը՝ պայմանավորված արտասահմանից ստացվող գործոնային եկամուտների ու տրանսֆերտների աճով և մասնավոր հատվածի կողմից տնօրինվող ներքին եկամուտների աճը՝ պայմանավորված քրիստոնեության 1700 - ամյակի տոնակատարությունների առիթով ժամանած զբոսաշրջիկների ներհոսքով ու մասնավորապես՝ ապրանքների ու ծառայությունների արտահանման աճով:

ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ աճի՝ տարվա առաջին կիսամյակում նկատված միտումը պահպանվել է նաև երրորդ եռամսյակում և ինն ամիսների արդյունքով կազմել է 7.8%՝ ծրագրված 11.8%-ի փոխարեն: Վերջինս պայմանավորվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների ծրագրային ցուցանիշի զգալի թերակատարմամբ. ակնկալվող 100 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն փաստացի ներդրվել է 82 մլն ԱՄՆ դոլար:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ինն ամիսների ընթացքում գրանցվել է արտահանման 16.4% իրական աճ՝ ծրագրված 16.9%-ի փոխարեն: Արտահանման աճի այս տեմպերը դրսևորվել են ներմուծման ծավալների 0.7% նվազման պարագայում: Ներմուծման նման վարքագիծը հիմնականում հետևանք է օտարերկրյա ուղղակի ներդրումների շրջանակներում սարքերի և սարքավորումների՝ ծրագրվածից քիչ ներկրման:

Տնտեսության մասնավոր հատվածի երկու հատկանշական առանձնահատկությունները՝ արտահանման բարձր աճը և ներմուծման գրեթե անփոփոխ ծավալների պարագայում սպառման աճի բարձր մակարդակը, վկայում են տնտեսությունում աճի որոշակի ներուժի կուտակման, ներմուծման փոխարինման մասին:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ. Հունվար – սեպտեմբեր ամիսներին պետական բյուջեի կանխիկ ծախսերը, անվանական արտահայտությամբ, թերակատարվել են շուրջ 12.3 մլրդ ՀՀ դրամով՝ հիմնականում թերակատարվել է (19%-ով) երրորդ եռամսյակի ցուցանիշը: Դրա հիմնական պատճառներից է երրորդ եռամսյակում եկամուտների՝ մոտ 8.2 մլրդ ՀՀ դրամով թերհավաքագրումը, որի հետևանքով ինն ամիսների թերհավաքագրումը կազմել է 6 մլրդ ՀՀ դրամ:

Իր հերթին, պետական սպառման և ներդրումների ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իրական արտահայտությամբ նվազել է 4.5%-ով՝ համախառն պահանջարկի վրա ունենալով բացասական ազդեցություն:

---

* *Փաստացի ցուցանիշները բերված են 31.10.2001 թ. դրությամբ՝ ՀՀ ԿԲ ֆինանսական ծրագրից: Հարաբերական ցուցանիշներն իրական արտահայտությամբ են, իսկ բացարձակները՝ անվանական, եթե հատուկ նշված չէ: Պետական հատվածին վերաբերող ցուցանիշները համախմբված բյուջեից են և վիճակագրության բացակայության պատճառով գնահատված են հանրապետական բյուջեի համամասնությունների հիման վրա:*

** *Վիճակագրական շեղումը պայմանավորված է ամբողջական առաջարկի և համախառն ծախսումների մեթոդներով կատարված ՀՆԱ -ի գնահատումների տարբերությամբ:*

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ*

Համախառն առաջարկի տարեկան արդյունքների առումով տնտեսական քաղաքականության հիմքում ընկած սպասումների համաձայն՝ ակնկալվում էր ՀՆԱ 6.5%** իրական աճ, որի 2.9 և 1.5 տոկոսային կետերը ապահովելու էին, համապատասխանաբար՝ ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Ինն ամիսների ընթացքում դրսևորված դրական միտումները և դրանց զարգացումը երրորդ եռամսյակում վկայում են տարվա արդյունքներով մոտ 7.5% տնտեսական աճի ձևավորման իրական նախադրյալների մասին:


ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ոլորտում հաշվետու ժամանակաշրջանում արդյունաբերական արտադրանքի իրական աճը կազմել է 3.8%՝ նախորդ տարվա 3.9%-ի փոխարեն (առանց էներգահամակարգի կազմել է 8.4%՝ նախորդ տարվա 6.8%-ի փոխարեն):

Արդյունաբերության ճյուղային կառուցվածքում շարունակվել են դեռևս նախորդ տարվանից նկատված դրական տեղաշարժերը, որոնք արտահայտվել են այնպիսի կարևոր ենթաոլորտների աշխուժացմամբ, ինչպիսիք են՝ լեռնահանքային արդյունաբերությունը, մեքենաների և սարքավորումների արտադրությունը (հիմնականում՝ ի հաշիվ հաղորդալարերի, էլեկտրալամպերի և ռելեների արտադրության աճի) և մետալուրգիան (ի հաշիվ ալյումինի և պղնձի արդյունաբերության աճի): Միևնույն ժամանակ, իրական անկում է արձանագրվել նախկինում արտահանման մեծ մասն ապահովող թանկարժեք իրերի արտադրության ենթաոլորտում՝ պայմանավորված համապատասխան հումքի ներմուծման զգալի նվազմամբ:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի ցուցանիշները հունվար-սեպտեմբերին (%)

Արդյունաբերության ճյուղ	տեսակարար կշիռ*		իրական աճ (+) / նվազում (-) **	
	2000	2001	2000	2001
էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	30.9	29.8	-9.1	-5.9
Լեռնահանքային արդյունաբերություն	5.4	6.9	26.1	23.7
Վերամշակող արդյունաբերություն, որից՝	63.8	63.3	6.3	6.9
սննդի արդյունաբերություն	36.2	35.7	12.9	11
մետալուրգիական արդյունաբերություն	5.4	7.7	40.8	50.9
թանկարժեք իրերի արտադրություն	5.9	3.6	-39.5	-41.8
քիմիական արդյունաբերություն	3.1	3.0	-11.1	-3.7
մեքենաների և սարքավորումների արտադրություն	1.3	2.1	43.8	53.2
Ամբողջ արդյունաբերություն	**100**	**100**	**3.9**	**3.8**

** Տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ:*
*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում:*



** «Համախառն առաջարկ» բաժնի՝ 2001 թ. վերաբերող ցուցանիշների աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-սեպտեմբերին» պարբերականի նախագիծն է:*
*** Համաձայն Կենտրոնական բանկի 2001 թ. Դրամավարկային քաղաքականության ծրագրի:*

Արդյունաբերական համախառն արտադրանքում զգալիորեն ավելացել է արտահանված արտադրանքի տեսակարար կշիռը՝ հիմնականում սննդի արդյունաբերության և մեքենաների ու սարքավորումների արտադրության ենթաոլորտների արտադրանքի արտահանման աճի հաշվին: Տեղաշարժ է գրանցվել նաև արտահանման աշխարհագրական կառուցվածքում՝ ավելացել է ԱՊՀ երկրներ արտահանվող ապրանքների տեսակարար կշիռը և նվազել՝ այլ երկրներ արտահանումը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ համախառն արտադրանքի 11.8% աճը 2001 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ապահովվել է բուսաբուծության ենթաոլորտի արտադրանքի աճի հաշվին, որն իր հերթին պայմանավորվել է բարենպաստ կլիմայական պայմաններով, ինչպես նաև ցանքատարածությունների որոշակի ավելացմամբ:


Միևնույն ժամանակ, անասնապահության ենթաոլորտի համեմատաբար փոքր աճը պայմանավորվել է մսի արտադրության կրճատմամբ, այն դեպքում, երբ 2000թ. նույն ժամանակահատվածում անասնապահության արտադրության իրական աճը կազմել է 5.9%:

ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ոլորտում շարունակվել են նախորդ տարվանից արձանագրված աշխուժացման միտումները: Արդյունքում՝ 2001 թ. առաջին ինն ամիսներին իրականացված կապիտալ շինարարության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 17.4%-ով (2000թ.՝ 13.8%):

Կապիտալ շինարարության ճյուղային կառուցվածքում ավելացել են ծառայությունների և եկեղեցաշինության ոլորտի տեսակարար կշիռները: Դա պայմանավորված է Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700 - ամյակի տոնակատարություններով և դրա հետ կապված՝ զբոսաշրջիկության ավելացած ծավալների սպասարկման անհրաժեշտությամբ:

Կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում, ձեռնարկությունների և օտարերկրյա ներդրողների տեսակարար կշռի նվազման հետ մեկտեղ, ավելացել են արտաքին ֆինանսավորման* և բնակչության կողմից ներդրված միջոցների տեսակարար կշիռները: Ընդ որում, արտաքին ֆինանսավորման կառուցվածքում զգալիորեն մեծացել է արտաքին վարկերի տեսակարար կշիռը: Սակայն դրական է այն փաստը, որ դրանց մեծ մասն ուղղվել է արտադրական նշանակության օբյեկտների շինարարությանը, այսինքն՝ դրանց ապագա վերադարձն ապահովող արտադրական ոլորտ:

Կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը
1999 - 2001 թթ. հունվար - սեպտեմբերին



Աղետի գոտու կապիտալ շինարարությունը, որը կազմել է ընդհանուր ծավալի 15.8%-ը (2000 թ.՝ 19%), հիմնականում իրականացվել է պետության (34.9%), մարդասիրական օգնության (24.9%) և Համաշխարհային բանկի վարկի (21.6%) միջոցների հաշվին:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Տրանսպորտի և կապի ոլորտներում 2001թ. հունվար-սեպտեմբերին, ի տարբերություն նախորդ տարվա, գրանցվել է զգալի աշխուժացում: Այսպես, բեռնափոխադրումներն ավելացել են 19.6, իսկ ուղևորափոխադրումները՝ 14.2%-ով, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակա-

* *Արտաքին ֆինանսավորումը ներառում է արտաքին վարկերը և նվիրատվություններն ու մարդասիրական օգնությունը:*

հատվածում համապատասխանաբար գրանցվել է 13.1% և 1.8% իրական նվազում: Հաշվետու ժամանակահատվածում տրանսպորտի ոլորտի աճը պայմանավորված է ավտոտրանսպորտի ենթաոլորտի զգալի աշխուժացմամբ: Կապի ոլորտի համախառն հասույթն ավելացել է 29.1%-ով՝ հիմնականում հեռախոսային խոսակցություններից ստացված հասույթի 40.1% իրական աճի հաշվին:


Նկատելիորեն աշխուժացել է նաև մանրածախ առևտրի ոլորտը, որտեղ իրական աճը կազմել է 15.2%՝ նախորդ տարվա 6.9%-ի փոխարեն:

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

2001 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում տնտեսությունում սղաճի ձևավորման առանձնահատկություններից էր սեզոնային վարքագիծը: Չնայած դրան՝ պահպանվել են սղաճի ցուցանիշների համեմատաբար ցածր մակարդակները, ինչը դրսևորվել է դեռևս 1998 թվականից և վկայում է տարիներ շարունակ տնտեսության՝ սղաճի ցածր գոտում գտնվելու մասին:


ՍԳԻ վարքագիծը 1997-2001 թթ.

(յուրաքանչյուր տարվա համար բազա է ընդունվել նախորդ տարվա դեկտեմբերը)



Նման միջավայրում, 2001 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով սահմանվել էին սղաճի՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ և միջին տարեկան ցուցանիշների, համապատասխանաբար՝ 3.5% և 3.4%, իսկ առաջին ինն ամիսներին՝ 1.3% և 3.1% մակարդակներ:

ՍԳԻ-ի ծրագրային և փաստացի ցուցանիշները 2001 թվականին



** 2001 թվականի յուրաքանչյուր ամիսը՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ:*


*** 2001 թվականի կուտակային ժամանակահատվածները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ (օր.՝ հունվար-սեպտեմբերը նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ):*

Այդուհանդերձ, սպասվածի համեմատ խորը արտահայտված սեզոնայնության պայմաններում, դիտարկվող ժամանակահատվածի վերջի դրությամբ սղաճի ցուցանիշը շեղվել է ծրագրայինից՝ կազմելով –0.8%: Սղաճի միջին ցուցանիշի (հունվար-սեպտեմբերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ) գծով սպասումները գրեթե իրականացել են. փաստացի ցուցանիշը ծրագրայինին գերազանցել է ընդամենը 0.3 տոկոսային կետով:

Հաշվետու ժամանակահատվածում տնտեսությունում գների ձևավորման մակրոմիջավայրի առանձնահատկություններից են.

- տնտեսական աճի վրա ամբողջական պահանջարկի ազդեցության խորացումը, իրական աճի մեծ տեմպերի պայմաններում, չի հանգեցրել գների համապատասխան աճի՝ պայմանավորված առկա արտադրական ներուժի օգտագործման և ընդլայնման ավելի մեծ տեմպերով, քան ակնկալվում էր,
- իրականացված հարկաբյուջետային քաղաքականության զսպողական ազդեցությունը,
- եվրոյի արժեզրկումը՝ ծրագրված արժեքավորման փոխարեն և հանքահումքային ապրանքների համաշխարհային գների անկումը,
- գյուղատնտեսական մթերքների գների՝ սպասվածի համեմատ խորը սեզոնայնությունը,
- համախառն պահանջարկի վրա դրամավարկային քաղաքականության ընդլայնողական ազդեցությունը,
- ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 3.1%*-ով արժեզրկումը:

Նկարագրված միջավայրում ձևավորվել է ՍԳԻ վարքագիծ, որն առավել տեսանելի է սպառողական զամբյուղը ներկայացնող երեք՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների և ծառայությունների հիմնական խմբերի օրինակով:




2001 թվականի երեք եռամսյակների ընթացքում (սեպտեմբերը՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ) պարենային ապրանքների գների անկումը, նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածների համեմատ, առավել զուսպ է եղել: Այդուհանդերձ, այս խմբի գրեթե բոլոր ենթախմբերում նկատվել է գների նվազում՝ 0.7%-ից մինչև 36.9%: Բացառություն են կազմել մսամթերքի, շաքարավազի, ոգելից խմիչքի և ծխախոտի ենթախմբերը, որոնցում ներառված ապրանքների գներն աճել են 0.1%-ից մինչև 12.4%-ով:

Նախորդ երկու տարիների հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցվել էր ոչ պարենային ապրանքների գների աճ, իսկ ընթացիկ տարում արձանագրված նվազումը հիմնականում պայմանավորվել է հեղուկ գազի 24.6% գնանկումով: Նշված ժամանակահատվածում զգալի է եղել դեղամիջոցների գների աճը՝ 10.4%:


Վերջին տարիներին ծառայությունների սակագների ձևավորման վրա պետության վարչարարական միջամտության թուլացման պայմաններում՝ դիտարկվող ժամանակահատվածում ծառայությունների շուկայում գրանցվել է 0.4% սղաճ:

Դա են վկայում նաև բնականոն սղաճի հաշվարկները, որոնց համաձայն՝ սղաճի ընդհանուր ցուցանիշի վրա պետության կողմից կարգավորվող գների ազդեցություն գրեթե չի նկատվել: Գյուղատնտեսական ապրանքների գների սեզոնային աճի ազդեցությունը կազմել է -1.1%: Բնականոն սղաճը, արդյունքում, սղաճի ընդհանուր ցուցանիշի ձևավորմանը նպաստել է 0.3%-ով:

** 2001 թվականի հունվար-սեպտեմբերի միջին փոխարժեքները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ:*




ՀՆԱ դեֆլյատորի կառուցվածքում ճյուղային գների ինդեքսները դրսևորել են տարբեր միտումներ: Առավել արագ է աճել գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը, իսկ արդյունաբերական արտադրանքի, կապիտալ շինարարության և բեռնափոխադրումների գների ինդեքսները զիջել են ՀՆԱ դեֆլյատորին, համապատասխանաբար՝ 3.7, 1.4 և 0.8 տոկոսային կետերով:



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ


Աշխատանքի շուկան տնտեսական ընդհանուր աշխուժացմանն արձագանքել է իրավիճակի զգալի բարելավմամբ: Գործազրկության մակարդակի զգալի (1.2 տոկոսային կետով) նվազման հետ մեկտեղ, արձանագրվել է բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտների և միջին ամսական աշխատավարձերի, համապատասխանաբար՝ 5.2% և 12% աճ: Արդյունքում, 2001թ. սեպտեմբերի դրությամբ, գործազրկության մակարդակը կազմել է 10%, իսկ միջին ամսական աշխատավարձը հունվար-սեպտեմբերին՝ 22.8 հազար դրամ:



** Ներառյալ՝ առողջապահություն, սոցապ., կրթություն, մշակույթ, արվեստ:*

2001 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարողականն էապես զիջել է նախորդ երկու եռամսյակների կատարողականները, որը հիմնականում պայմանավորված էր, ինչպես հարկերի հավաքագրման ցածր մակարդակով, այնպես էլ ակնկալվող արտաքին ֆինանսավորման հետաձգմամբ:

Ամբողջական պահանջարկի վրա ազդեցության տեսանկյունից, հարկաբյուջետային քաղաքականությունը, համաձայն ազդակների ցուցանիշի, եղել է 0.5%-ով զսպողական՝ ծրագրված 0.08% չեզոք քաղաքականության փոխարեն: Ընդ որում, ըստ եկամուտների ազդակի, եկամուտների քաղաքականությունը 3.8%-ով ընդլայնողական էր՝ ծրագրված 0.7% զսպողականի փոխարեն, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ երրորդ եռամսյակում, չնայած տնտեսական ակտիվության աճին, հարկերի հավաքագրման մակարդակը թե՛ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի և թե՛ հաշվետու տարվա նախորդ եռամսյակների համեմատ բավականին ցածր էր: Եկամուտների այսպիսի ընդլայնողական քաղաքականությունը չի կարելի համարել դրական երևույթ: Ներկայիս հարկային օրենսդրության պայմաններում նման միտումի շարունակական դրսևորումը կհանգեցնի տնտեսությունում ձևավորվող եկամուտների բևեռացման խորացման* և ստվերային տնտեսության եկամուտների աճի: Ծախսային քաղաքականությունը, ըստ ձևավորված ծախսերի ազդակի, եղել է 4.3% զսպողական՝ ծրագրված 0.6% ընդլայնողականի փոխարեն:




Եկամուտների հավաքագրման սահուն ընթացք և տարեկան ծրագրի կատարումն ապահովելու նպատակով 2001թ. երրորդ եռամսյակի համար ծրագրվել էր եկամուտների և դրամաշնորհների 51.1 մլրդ դրամ մակարդակ. փաստացի ապահովվել է 43.1 մլրդ դրամ ցուցանիշ կամ ծրագրվածի 84.3%-ը**: Պատճառը հարկային եկամուտների և պետական տուրքի գծով եռամսյակային ծրագրի թերի կատարումն էր (83.5%). ծրագրված 46.6 մլրդ դրամի փոխարեն փաստացի հավաքագրվել է 38.9 մլրդ դրամ:


Նշենք նաև, որ հարկեր / ՀՆԱ ցուցանիշը ինն ամսվա արդյունքներով կազմել է 13.6%՝ ծրագրված 14.9%-ի փոխարեն (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 13.9%):

** Տե՛ս ՀՀ վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը», Երևան, 2001 և «ՀՀ աղքատության կրճատման միջանկյալ ռազմավարական ծրագիր» (անգլ. հրատ., էջ 3, 4, 20), Երևան, 2001:*

*** Հաշվետվությունում օգտագործված են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ ԿԲ ներկայացված՝ պետբյուջեի 2001թ. առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների փաստացի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ԿԲ և ԱՄՀ 16.02.2001 թ. համատեղ հուշագրով հաստատված ծրագրի 2001թ. եռամսյակների բյուջեի ծրագրային ցուցանիշները:*



Ընդհանուր առմամբ, նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ այս տարվա նույն ժամանակահատվածում ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները նվազել են 5.5 %-ով, իսկ հարկերը՝ 6.3 %-ով, որի արդյունքում, ըստ ազդակների նախանշած ցուցանիշների, գրանցվել է ամբողջական պահանջարկի նկատմամբ եկամուտների ընդլայնողական ազդեցություն:




Եռամսյակի ընթացքում ծախսերը կազմել են ծրագրված մակարդակի 88.2 %-ը (60004 մլն դրամ՝ ծրագրված 68039 մլն դրամի փոխարեն), այդ թվում՝ ընթացիկ ծախսերը՝ 84.7%-ը, իսկ կապիտալ ծախսերը՝ 92.4.%-ը: Եռամսյակի ընթացքում ընթացիկ ծախսերի մակարդակը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 1.9%-ով, իսկ ինն ամսվա արդյունքներով՝ կատարվել է տարեկան ծրագրի 70.1%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 63.6%): Եռամսյակի ընթացքում կապիտալ ծախսերը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 1.04%-ով և ինն ամիսների ընթացքում կատարվել է տարեկան ծրագրի 55.4%-ը: Հարկ է նշել նաև, որ ինն ամսվա արդյունքներով, հատկապես մեծ է լրահատկացումների գծով տարեկան ծրագրի կատարման մակարդակը՝ 88.6%, իսկ զուտ վարկավորման տարեկան ծրագիրը, ըստ ինն ամսվա արդյունքների, գերակատարվել է 14.1 %-ով:

Հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով՝ 2001թ. բյուջեի ծախսերի կատարման ընթացքում կուտակվել է 8294 մլն դրամի ապառք, որից 30 օր անց՝ ապառքները կազմել են 2768 մլն դրամ:

Երրորդ եռամսյակում, բյուջեի ծրագրված համամասնությունների թերի կատարման հետ մեկտեղ, նկատվել է նախորդ եռամսյակներին բնորոշ՝ բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման սեզոնայնություն: Երրորդ եռամսյակի ամիսների վերջին հինգ օրվան միջին հաշվով բաժին է ընկել ամսական եկամուտների 42.8%-ը և կատարված ծախսերի 36.6%-ը:

Բյուջեի կանխիկ պակասուրդը կազմել է ծրագրված մակարդակի 64.1%-ը: Պակասուրդի ծրագրված ցուցանիշի փոխարեն նման ցածր մակարդակի ձևավորումը հիմնականում պայմանավորված էր

նախատեսված ԿԲՎ-ի 14.6 մլն ԱՄՆ դոլարի չստացմամբ և վճարվելիք արտաքին պարտքի 3.2 մլն ԱՄՆ դոլար գումարի հետաձգմամբ: Արդյունքում՝ արտաքին աղբյուրների միջոցներից զուտ ֆինանսավորումը կազմել է եռամսյակային ծրագրի 69.6%-ը: Արժեթղթերի տեղաբաշխումից ստացվող զուտ մուտքերը գերազանցել են եռամսյակային ծրագիրը մոտ 3.4 անգամ (ծրագրված 553 մլն դրամի փոխարեն ապահովվել է 1907 մլն դրամի մուտք), իսկ ինն ամսվա արդյունքներով, կազմել են ինն ամսվա ծրագրի 159.6%-ը և տարեկան ծրագրի 106.2%-ը (փաստացի զուտ տեղաբաշխումն, ըստ ինն ամսվա արդյունքների, կազմել է 4.8 մլրդ դրամ): Վերջինիս նպաստել է արժեթղթերի շուկայում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ կոորդինացումը, որի արդյունքում հաջողվել է ցածր մակարդակի վրա պահել պետական արժեթղթերի տոկոսադրույքները և նպաստավոր միջավայր ստեղծել տեղաբաշխման ծավալների ավելացման համար: Սեփականաշնորհման միջոցների զուտ օգտագործումը երրորդ եռամսյակում կազմել է 311 մլն դրամ՝ ծրագրված 2333 մլն դրամի փոխարեն:



Ամփոփելով նշենք, որ ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս չորրորդ եռամսյակի ճշգրտված ծրագրի, հետևաբար նաև բյուջեի տարեկան ծրագրի կատարման առումով ռիսկեր գոյություն ունեն: Դրանք հիմնականում կապված են ԿԲՎ-ի 20 մլն ԱՄՆ դոլարի ստացման, ՌԴ պարտքի մարման և եկամուտների հավաքագրման բնագավառներում առկա անորոշությունների հետ: Հետևաբար, դրամավարկային ծրագրի իրականացման միջավայրում նկատված անորոշությունները կարող են առաջացնել ծրագրից շեղումներ:


Արտաքին հատված

2001 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 144.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կրճատվելով 29.1 տոկոսով, մինչդեռ ծրագրով նախատեսված էր 8.5 տոկոս աճ:

Հիմնական շեղումը նկատվել է ապրանքների ներմուծման գծով: Ներմուծումը կազմել է 617.7 մլն դոլար (CIF գներով)՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 2.3 տոկոսով՝ ծրագրով նախատեսված 12.4 տոկոս աճի փոխարեն: Նման դինամիկան հիմնականում պայմանավորված էր «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» և «Մեքենաներ, սարքավորումներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների, համապատասխանաբար, 17.1 տոկոս և 34.3 տոկոս նվազմամբ՝ ծրագրով նախատեսված 17.5 տոկոս և 8.8 տոկոս աճի փոխարեն: «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալների նվազումը հետևանք էր Ռուսաստանի Դաշնության հետ չմշակված ադամանդի ներմուծման պայմանագրի վավերացման հետաձգմամբ, ինչի արդյունքում վերջինիս ներկրումը տեղափոխվեց 2001 թվականի չորրորդ եռամսյակ: «Մեքենաներ, սարքավորումներ» ապրանքախմբի ներմուծման նվազումը անմիջականորեն կապված էր ուղղակի ներդրումների հետ և վերջինիս կրճատման արդյունք էր: Քրիստոնեության ընդունման 1700-ամյակի արարողությունների հետ կապված՝ ակնկալվում էր զբոսաշրջիկների թվաքանակի ավելացում, որից ելնելով էլ ծրագրվել էր սննդամթերքի ներմուծման 13.2 տոկոս աճ: Սակայն գրանցվել է ընդամենը 0.5 տոկոս աճ: Վերջինս վկայում է, որ ներմուծման փոխարինիչների արտադրության աճն ավելի է եղել, քան ծրագրված էր, ինչը իր արտահայտությունն է գտել նաև հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում գրանցված 9.9 տոկոս տնտեսական աճի ցուցանիշում:

Արտահանումը 2001 թվականի ինն ամիսներին կազմել է 239.5 մլն դոլար (FOB գներով)՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.6 տոկոսով՝ ծրագրով նախատեսված 16.2 տոկոս աճի փոխարեն: «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ցուցանիշի՝ ծրագրայինից էական շեղումը (19.5 տոկոս աճի փոխարեն 12.5 տոկոս նվազում) փոխհատուցվել է «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի ցուցանիշի զգալի աճով (22.5 տոկոս աճի փոխարեն 112.8 տոկոս աճ), ինչպես նաև «Մանածագործական արտադրանք», «Պլաստմասսա և դրանից իրեր» ապրանքախմբում ներառված ապրանքների արտահանման աճի հաշվին, ինչի հետևանքով արտահանման մակարդակը մի փոքր շեղվել է ծրագրված ցուցանիշից:


Արտահանման և ներմուծման՝ վերը նշված դինամիկայի պայմաններում առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է 378.1 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 9.5 տոկոսով՝ ծրագրով նախատեսված 10.5 տոկոս աճի փոխարեն:



Ընթացիկ հաշվի պակասուրդի նվազումը ուղեկցվել է կապիտալի և ֆինանսական հաշվի զգալի կրճատմամբ: Նախ, ուղղակի օտարերկրյա ներդրումները կազմել են 82 մլն դոլար՝ ծրագրված 100 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Վերջինիս կրճատման պատճառը հիմնականում «Արմենտել» ընկերության կողմից իրականացվող ներդրումների նվազումն էր: Նշված հանգամանքը նկատելի էր նաև ներմուծման կառուցվածքում, որտեղ «Մեքենաներ, սարքավորումներ» ապրանքախմբի ծավալը կրճատվել է մոտ 30 մլն ԱՄՆ դոլարով: Կապիտալի և ֆինանսական հաշվի կրճատումը պայմանավորված էր նաև արտաքին վարկերի գծով հոսքերի թերստացմամբ, մասնավորապես, Կառուցվածքային բարեփոխումների վարկի (ԿԲՎ-4) մասնաբաժնի հետաձգմամբ: Նման պայմաններում թեև Կենտրոնական բանկը փողի բազայի կառավարման նպատակով որպես իրացվելիություն ներարկելու գործիք միջբանկային արտարժութային շուկայից գնել է 5.4 մլն դոլար արտարժույթ, այնուամենայնիվ ՁԱՀ-ը հունվար-սեպտեմբերին նվազել են 5.3 մլն ԱՄՆ դոլարով:


Վճարային հաշվեկշռի նման վարքագծի պայմաններում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը 2001 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արժեզրկվել է 3.14 տոկոսով՝ կազմելով 552.33 դրամ: Հուլիս-սեպտեմբեր ամիսների միջին փոխարժեքը կազմել է 554.23 դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ արժեզրկվելով 0.36 տոկոսով:

ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար հաշվարկային միջին եռամսյակային փոխարժեք



2001 թվականի հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքն արժեզրկվել է 7.0%-ով: Իրական փոխարժեքի արժեզրկումը պայմանավորված է հետևյալ գործոններով՝ Հայաստանում փաստացի գրանցված սղաճը* հունվար-սեպտեմբերին կազմել է 3.3% (ծրագրված 3.1%-ի փոխարեն), մինչդեռ առևտրային գործընկեր երկրների միջին կշռված փաստացի սղաճը՝ 14.5%՝ գերազանցելով նախատեսված մակարդակը: Մյուս կողմից, ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի արժեքավորումը կազմել է 3.1%՝ զսպելով իրական փոխարժեքի արժեզրկումը: 2001թ. հունվար-սեպտեմբերին եվրոյի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակել է արժեզրկվել միջինը 4.9 տոկոսով՝ հակառակ միջազգային կանխատեսումների, իսկ դրամի նկատմամբ արժեզրկվել է 1.8 տոկոսով:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեք (աճը նշանակում է արժեքավորում)



* *Հաշվարկված է 2001 թ. հունվար-սեպտեմբերի միջինը 2000 թ. հունվար-սեպտեմբերի միջինի համեմատ:*

Դրամավարկային քաղաքականություն

Դրամավարկային միջավայրի հիմնական խնդիրները

2001 թվականի երրորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականությունը ծրագրվել էր ըստ դրամավարկային տարեկան ծրագրով նախանշված ուղղությունների:

Այնուհանդերձ, 2001 թվականի երրորդ եռամսյակում դրամավարկային միջավայրն ունենալու էր էական առանձնահատկություններ՝ պայմանավորված նրանով, որ զբոսաշրջիկների սպասվող այցելությունների արդյունքում տվյալ ժամանակահատվածում էր ակնկալվում համախառն պահանջարկի ընդլայնման գերակշիռ մասը: Մասնավորապես օգոստոս-սեպտեմբեր ամիսներին էր նախատեսվում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակի հետ կապված տոնակատարությունների մեծ մասի անցկացումը, որոնք հանգեցնելու էին արտարժութային զգալի ներհոսքի:

Դրամավարկային ծրագրի կատարման վրա էական ազդեցություն էին թողնելու հարկաբյուջետային և արտաքին հատվածներում պահպանվող ռիսկերը: Մասնավորապես, կապիտալի ներհոսքի նախատեսվող ծավալները չապահովելը և Կառուցվածքային բարեփոխումների վարկի հերթական մասնաբաժնի ստացման ուշացումը (14.4 մլն դոլար) կարող էին հանգեցնել համախառն պահանջարկի զգալի կրճատման: Բացի այդ, եվրոյի փոխարժեքի արժեզրկման (տարվա ընթացքում ակնկալվում էր արժեքավորում) միտումների պահպանումը զսպողական ազդեցություն կունենար սղաճի ցուցանիշի վրա՝ առաջ բերելով վերջինիս՝ գնահատված մակարդակից էական շեղումներ:

Համախառն պահանջարկի գնահատված մակարդակի ապահովման նպատակով ԿԲ-ն նախատեսում էր երրորդ եռամսյակում փողի բազան ավելացնել շուրջ 4.6%-ով՝ հասցնելով 70 մլրդ 62 մլն դրամ մակարդակի: Վերջինիս գերակշիռ մասը բաժին էր ընկնելու սեպտեմբերին: Փողի բազայի աճը նախատեսվում էր ապահովել դրամավարկային քաղաքականության անուղղակի գրեթե բոլոր գործիքների, մասնավորապես ռեպո համաձայնագրերի կնքման, երկրորդային շուկայում արժեթղթերի առքի և արտարժույթի գնման միջոցով: Ընդ որում, փողի բազայի կառավարումը պետք է իրականացվեր մեծածավալ արտաքին պարտքի սպասարկման և սեփականաշնորհման միջոցների շարժի անորոշության պայմաններում:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ (ըստ 2001թ. ֆինանսական ծրագրի)*


Ցուցանիշներ	II եռամսյակ		III եռամսյակ	
	Ծրագրային	Փաստացի	Ծրագրային	Փաստացի
Փողի զանգված (M2X, ժամ. վերջ)	148597	154342	157524	158728
Փողի զանգված (M2X, ժամ. միջին)	143170	147758	150723	157425
Փողի շրջապտույտի արագություն	1.97	1.85	1.94	2.03
Դրամային զանգված (M2, ժամ. վերջ)	68847	71420	72519	75235
Դրամային զանգված (M2, ժամ. միջին)	66734	68291	69371	73357
Դրամի շրջապտույտի արագություն	4.22	4.00	4.21	4.36
Փողի բազա (ժամ. վերջ)	66950	66704	70062	71564
Փողի բազա (ժամ.միջին)	65107	64126	68077	69330
Փողի բազմարկիչ	2.20	2.30	2.21	2.27
Դրամային բազմարկիչ	1.03	1.07	1.02	1.058

** Ազգային ժողով ներկայացված ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագրից որոշակի շեղումները պայմանավորված են 2000 թ. ՀՆԱ իրական աճի ճշգրտմամբ՝ նախկին 5%-ի փոխարեն 6%:*

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Երրորդ եռամսյակում դրամային զանգվածի աճի տեմպը հիմնականում եղել է ծրագրվածի շրջանակներում՝ 5.4% (ծրագրային ցուցանիշը՝ 5.3%): Փողի զանգվածի աճի տեմպը կազմել է 2.8%՝ ծրագրված 6%-ի փոխարեն: Հարկ է նշել, որ 2-րդ եռամսյակում փողի զանգվածի ցուցանիշը զգալիորեն գերազանցել էր ծրագրվածը, որի պայմաններում, չնայած փողի զանգվածի՝ ծրագրվածի համեմատ աճի ցածր տեմպին, այնուհանդերձ 3-րդ եռամսյակում գրանցվել է փողի զանգվածի բարձր մակարդակ (փողի զանգվածի 3-րդ եռամսյակի ցուցանիշը ավելի քան 1.2 մլրդ դրամով գերազանցել է ծրագրվածը):

Թեև փողի պահանջարկի փաստացի ցուցանիշները զգալիորեն գերազանցել են ծրագրված մակարդակները, այնուհանդերձ 2000թ. դեկտեմբերի համեմատ տարվա 9 ամիսների սղաճը, ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված 1.3%-ի փոխարեն, կազմել է -0.8%: Վերջինս առավելապես կրել է երրորդ եռամսյակում գների սեզոնային անկման ազդեցությունը: Քանի որ դրամավարկային քաղաքականության ազդակները փոխանցվում են տնտեսական ցուցանիշներին լագային ժամանակահատվածով, հետևաբար ակնկալվում է, որ 3-րդ եռամսյակում իրականացված ընդլայնողական քաղաքականության ազդեցությունը առավելապես կդրսևորվի հաջորդ եռամսյակներում:




Ինչ վերաբերում է փողի պահանջարկի կառուցվածքային բաղադրատարրերի միտումներին, ապա ժամկետային դրամային ավանդներից բացի, մնացած բոլոր տարրերը դրսևորել են աճի միտում: Այսպես, շրջանառության մեջ կանխիկ դրամի ծավալներն աճել են շուրջ 4%-ով, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում դրա աճի տեմպը կազմել է 12%: Թեև պահպանվել է արտարժութային ավանդների՝ նախորդ տարիներին դրսևորած աճի միտումը, սակայն այն անհամեմատ ավելի ցածր է եղել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (2000թ. 3-րդ եռամսյակ 7%, 2001 թ. 3-րդ եռամսյակ՝ 0.7%): Ընդ որում, արտարժույթով ժամկետային ավանդները նվազել են, իսկ ցպահանջ ավանդները՝ աճել: Արտարժութային ավանդների կառուցվածքում հիմնական շարժերն ապահովել են տնային տնտեսությունները: Ի դեպ, տնային տնտեսությունները ժամկետային ավանդների փոխարեն նախապատվությունը տվել են ցպահանջ արտարժութային ավանդներին (տնային տնտեսությունների ցպահանջ արտարժութային ավանդներն ավելացել են շուրջ 900 մլն դրամով՝ ժամկետային ավանդների 800 մլն դրամով նվազման պարագայում):

Միայն ցպահանջ դրամային ավանդների աճի տեմպն է գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը (16.7%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 12.1% ցուցանիշի փոխարեն): Նշված աճը գրանցվել է հիմնականում ձեռնարկությունների ավանդների աճի հաշվին (18.2%): Թեև աճի միտում են դրսևորել տնային տնտեսություններից ներգրավված դրամային ցպահանջ ավանդները ևս, սակայն դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ավանդների կառուցվածքում մնում է զգալիորեն ցածր:

Անդրադառնալով ժամկետային դրամային ավանդների վարքագծին՝ նշենք, որ դրանց նվազման տեմպը եղել է շատ ավելի փոքր, քան նախորդ տարիներին (1999թ. III եռ.՝ -11.4%, 2000թ. III եռ.՝ -21.5%, 2001թ. III եռ.՝ -5.2%):

Եռամսյակի ընթացքում ավանդների կառուցվածքային շարժերի միտումը վկայում է, որ և՛ տնտեսավարող սուբյեկտները, և՛ բնակչությունը ժամկետային ավանդների համեմատ նախապատվությունը տվել են ցպահանջ ավանդներին: Դա կարելի է բացատրել երրորդ եռամսյակում գործարար ակտիվության ավելացմամբ, ինչպես նաև տարեսկզբից դրսևորված՝ ժամկետային ավանդների տոկոսադրույքի նվազման ազդեցությամբ:

Փողի շրջապտույտի արագության փաստացի ցուցանիշը գերազանցել է ծրագրվածը՝ կրելով անվանական ՀՆԱ-ի՝ սպասվող մակարդակից ավելի բարձր ցուցանիշի ազդեցությունը: Փողի շրջապտույտի արագությունը կազմել է 2.03՝ ծրագրված 1.94-ի փոխարեն: Վերոնշյալ գործոնի ազդեցությամբ պայմանավորված՝ ՀՀ դրամի շրջապտույտի արագությունը նույնպես գերազանցել է ծրագրված մակարդակը՝ կազմելով 4.36 (ծրագրային ցուցանիշը՝ 4.21):



ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ

Փողի առաջարկի կառուցվածքային տարրերը դրսևորել են հետևյալ վարքագիծը. բանկային համակարգի ԶԱԱ-ն աճել են 5 մլրդ 914 մլն դրամով, իսկ ԶՆԱ-ն նվազել՝ 1 մլրդ 174 մլն դրամով: Ընդ որում, ԿԲ ԶԱԱ-ն աճել են 5 մլրդ 70 մլն դրամով (ԿԲ ԶԱԱ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքով), իսկ բանկերի ԶԱԱ-ն՝ 844 մլն դրամով:

Երրորդ եռամսյակի վերջի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, տնտեսության վարկավորման փաստացի ծավալներն[*] աճել են 3.6%-ով՝ այնքան, որքան նախորդ եռամսյակի համապատասխան ցուցանիշը, իսկ հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում, 2000թ. համապատասխան ժամանակահատվածի համեմատ՝ 6.5%-ով: Վերջինս զգալիորեն ցածր է նախորդ տարիների համապատասխան ցուցանիշից: Երկրորդ եռամսյակի համեմատ հաշվետու ժամանակահատվածում վարկավորման ծավալների ցուցանիշի փոփոխություն չի նկատվել, այն դեպքում, երբ ծրագրված էր 5.3%-ով աճ: Եռամսյակի ընթացքում բանկերի հաշվեկշռից հետհաշվեկշիռ դուրս են գրվել շուրջ 3 մլրդ 550 մլն դրամի չափով վատ վարկեր: Տնտեսության վարկավորման անփոփոխ ցուցանիշը վկայում է, որ, այնուամենայնիվ, հաշվետու ժամանակահատվածում վարկավորումը մոտավորապես ավելացել է վատ վարկերի դուրսգրման գումարի չափով:

Տնտեսության վարկավորման ընդհանուր կառուցվածքում ավելացել են ձեռնարկություններին տրամադրված վարկերը: Ընդ որում, աճել են և՛ դրամային, և՛ արտարժութային վարկերը: Իսկ բնակչությանը տրամադրված վարկերն, ընդհակառակը՝ նվազել (13.5%)՝ հիմնականում արտարժութային վարկերի նվազման հաշվին:

Կառավարության նկատմամբ բանկային համակարգի պահանջների ցուցանիշը եռամսյակի ընթացքում աճել է շուրջ 870 մլն դրամով: Ընդ որում, ԿԲ պահանջների ցուցանիշն աճել է շուրջ 1 մլրդ 550 մլն դրամով, իսկ բանկերինը՝ նվազել շուրջ 680 մլն դրամով: Վերջինս կրել է միջազգային կազմակերպություններից, մասնավորապես՝ Լինսի հիմնադրամից ստացված վարկերի (շուրջ 1 մլրդ 600 մլն դրամ, որից մոտ 900 մլն դրամը՝ Լինսի հիմնադրամի վարկերն են) և բանկերի՝ պետարժեթղթերի պորտֆելի ընդլայնման (շուրջ 1 մլրդ 360 մլն դրամ), ինչպես նաև բանկերում Կառավարության ավանդների աճի (շուրջ 480 մլն դրամ) ազդեցությունները: Կառավարության և ԿԲ փոխհարաբերություններում վերոնշյալ ցուցանիշի փոփոխությունը տեղի է ունեցել Գանձապետարանի միասնական հաշվի միջոցների նվազման (շուրջ 100 մլն դրամ), ԿԲ-ում Կառավարության ավանդների աճի (շուրջ 400 մլն դրամ), ԿԲ պետարժեթղթերի պորտֆելի ընդլայնման (շուրջ 1 մլրդ 670 մլն դրամ) և ՕԻԳ-երի հաշիվների մնացորդի նվազման (180 մլն դրամ) արդյունքում:

---

[*] *Այստեղ՝ տնտեսության նկատմամբ բանկերի պահանջների ցուցանիշն է, որը համապատասխանում է դրամավարկային քաղաքականության ամփոփ ցուցանիշների աղյուսակի «Տնտեսություն» տողի ցուցանիշին (առանց կուտակված տոկոսների): Այս ցուցանիշը և հաշվետվության «ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները» բաժնի «վարկային ներդրումներ» ցուցանիշը համադրելի չեն:*

ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉ

Երրորդ եռամսյակի ընթացքում և՛ փողի, և՛ դրամային բազմարկիչները գերազանցել են ծրագրված մակարդակները: Փողի բազմարկիչը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 4.1%-ով, կազմել է 2.27 (ծրագրված էր 2.21), իսկ դրամային բազմարկիչը, աճելով 1.7%-ով, կազմել է 1.06՝ (ծրագրված էր 1.02)*: Այնուհանդերձ, նախորդ եռամսյակի համեմատ փողի և դրամային բազմարկիչները դրսևորել են նվազման միտումներ: Եռամսյակի ընթացքում բազմարկիչների մակարդակների վրա հիմնական ազդող գործոններն էին շրջանառության մեջ կանխիկ դրամի և արտարժութային ավանդների աճի գրանցված ցուցանիշները: Թեև եռամսյակների վերջի դրությամբ արտարժութային ավանդի ցուցանիշների նկատելի փոփոխություններ չեն եղել, սակայն գրանցվել է եռամսյակային միջին ցուցանիշների էական աճի տեմպ, որը չեղոքացվելով կանխիկ դրամի աճի ազդեցությամբ՝ արդյունքում հանգեցրել է փողի բազմարկչի 1.3%-ով նվազման: Նշված գործոններն ազդեցություն են ունեցել նաև դրամային բազմարկչի վարքագծի վրա: Վերջինս նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել է 0.7%-ով: Բազմարկիչների մակարդակի վրա ազդող գործոններից կարելի է առանձնացնել նաև բանկերի ավելցուկ պաշարների մակարդակի փոփոխությունը, որը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 21.4%-ով՝ միջին հաշվով կազմելով 1 մլրդ 150 մլն դրամ: Մնացած գործոնների էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Փողի և դրամային բազմարկիչները ու դրանց բաղադրատարրերը

	c/d	t_1	t_2	t_3	e_1/d	e_2/d	K (M2X)	K (M2)
II եռամսյակ	4.07	0.52	6.4	3.92	0.16	0.17	2.3	1.065
III եռամսյակ	4.32	0.48	6.64	3.73	0.17	0.12	2.27	1.06
գործոնների փոփոխություն (նախորդ եռամսյակի նկատմամբ)	6.2%	-6.9%	3.7%	-4.8%	2.5%	-24.6%		
փողի բազմարկչի փոփոխություն (նախորդ եռամսյակի նկատմամբ)	-2.8%	-0.3%	1.4%	0.1%	-0.1%	0.4%	-1.3%	
դրամային բազմարկչի փոփոխություն (նախորդ եռամսյակի նկատմամբ)	-0.3%	-0.6%	-0.5%	0.3%	-0.1%	0.5%		-0.7%

որտեղ՝

c/d - շրջանառության մեջ կանխիկ դրամ / դրամով ցպահանջ ավանդներ


t_1 - դրամով ժամկետային ավանդներ / դրամով ցպահանջ ավանդներ

t_2 - արտարժույթով ավանդներ / դրամով ցպահանջ ավանդներ

t_3 - փողի զանգվածի տարր չհանդիսացող ներգրավված միջոցներ (ոչ ռեզիդենտների և Կառավարության ավանդներ) / դրամով ցպահանջ ավանդներ

e_1/d - բանկերի դրամարկղային մնացորդ / դրամով ցպահանջ ավանդներ

e_2/d - բանկերի ավելցուկ պաշարներ / դրամով ցպահանջ ավանդներ



ՓՈՂԻ ԲԱԶԱ

Երրորդ եռամսյակում փողի բազայի կառավարման քաղաքականությունն էականորեն տարբերվելու էր նախորդ եռամսյակների համար ծրագրված քաղաքականություններից, քանի որ հիշյալ ժամանակահատվածում էր սպասվում համախառն պահանջարկի ընդլայնման և դրա հետ կապված՝ արտարժութային միջոցների ներհոսքի գերակշիռ մասը, որին համապատասխան՝ պետք է իրականացվեր ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն:

* *Փողի և դրամային բազմարկիչների ցուցանիշները եռամսյակային միջին ցուցանիշներ են, որոնք հաշվարկվել են որպես եռամսյակի միջին ամսական ցուցանիշների միջին թվաբանական:*


Այդ նպատակով ծրագրվել էր դրամական բազայի 4.6%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 20.6%-ով աճ: Փողի բազայի մեծացում հիմնականում սպասվում էր սեպտեմբերին, քանի որ այդ ժամանակահատվածում էր նախատեսվում տոնակատարությունների մեծ մասի անցկացումը: Այս առումով, փողի բազայի կառավարումը հուլիս-օգոստոս ամիսներին պետք է իրականացվեր տատանումների թույլատրելի միջակայքի միջնագծի սահմաններում, իսկ սեպտեմբերին դրա մակարդակը նախատեսվում էր հասցնել տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին:

Փողի բազայի կառավարման տեսանկյունից, նախորդ եռամսյակներում առկա ռիսկերը պահպանվել են նաև երրորդ եռամսյակում, որոնք լուրջ խնդիրներ են առաջացրել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման առումով: Դրանցից են՝ սեփականաշնորհման արտարժութային հաշվից ծախսված միջոցների վերականգնման աղբյուրների, ստացվելիք և վճարվելիք արտաքին պարտքի ծավալների ու ժամկետների անորոշությունը: Մասնավորապես, Կառուցվածքային բարեփոխումների վարկի հերթական մասնաբաժնի ստացման ժամկետների հետաձգումը կարող էր հանգեցնել բյուջետային ծախսերի թերակատարման՝ առաջացնելով լուրջ շեղումներ դրամավարկային ծրագրված և փաստացի ցուցանիշների միջև:


Օգոստոսին ԿԲ-ն հանդես եկավ 3-րդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ հայտարարությամբ, որի նպատակն էր բանկերին տեղյակ պահել, որ կապիտալի մեծ ներհոսքի, ինչպես նաև սեպտեմբերին ակնկալվող արտաքին ֆինանսավորման ժամկետների հետաձգման պատճառով օգոստոս ամսից արդեն ԿԲ-ն իրականացնելու էր ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն: Հայտարարության մեջ նշվում էր նաև, որ հաշվի առնելով հարկաբյուջետային և արտաքին հատվածներում պահպանվող ռիսկերը՝ ՀՀ ԿԲ-ն, սղաճի տարեկան ծրագրային մակարդակն ապահովելու նպատակով, երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսում էր փողի բազան կառավարել տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանի՝ 71.9 մլրդ դրամի շրջակայքում:

Հաշվետու ժամանակահատվածում ԿԲ-ն վարել է նախատեսվածի համեմատ առավել ընդլայնողական քաղաքականություն: Եռամսյակի վերջին, նախորդ եռամսյակի համեմատ, փողի բազայի աճը կազմել է 7.3%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 23.3%:

Եռամսյակի ընթացքում փողի բազան դրսևորել է տատանողական վարքագիծ: Հուլիսին փողի բազայի մակարդակը եղել է տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին մոտ, իսկ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին գերազանցել է այն՝ տատանումների թույլատրելի միջակայքում գտնվելով միայն օգոստոսի վերջի և սեպտեմբերի սկզբի տասնօրյակներում: Վերջինս հիմնականում պայմանավորված էր Կառավարության հարկային մուտքերի աճի հետևանքով Գանձապետարանի միասնական հաշվում միջոցների կուտակմամբ:




Եռամսյակի ընթացքում ավելցուկային իրացվելիության միջին մակարդակը կազմել է 1 մլրդ 150 մլն դրամ, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում նշված ցուցանիշը տատանվել է 800 դրամի շուրջ: Ավելցուկ պաշարների նման մակարդակի ձևավորմանը մեծապես նպաստել է պարտադիր պահուստավորման ենթակա գումարների աճի ավելի դանդաղ տեմպը. ընթացիկ տարվա երրորդ եռամսյակում 2.8%՝ նախորդ եռամսյակի 3.2%-ի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 9.5% աճի փոխարեն: Նշենք, որ ավելցուկ պաշարների կտրուկ փոփոխություններ չեն արձանագրվել: Դրանք զգալիորեն աճել են սեպտեմբերին՝ կրելով իրացվելիության մեծածավալ ներարկման ազդեցությունը:




Եռամսյակի ընթացքում փողի բազայի աճն ապահովվել է ՋԱԱ-ի և ՋՆԱ-ի, համապատասխանաբար՝ 5 մլրդ 70 մլն դրամ ավելացման և 209 մլն դրամ նվազման արդյունքում:

Փողի բազայի ընդլայնումն ապահովվել է ռեպո համաձայնագրերի կնքման (3 մլրդ 604 մլն դրամի ռեպո գործարքների կնքում՝ ծրագրված 4 մլրդ 829 մլն դրամի փոխարեն), երկրորդային շուկայում արժեթղթերի ձեռքբերման (շուրջ 3 մլրդ դրամի՝ ծրագրված 2 մլրդ 600 մլն դրամի փոխարեն) և արտարժույթի գնման միջոցով (2 մլրդ 976 մլն դրամ՝ ծրագրված 1 մլրդ 500 մլն դրամի փոխարեն):

Փաստորեն ԿԲ-ն գնել է ավելի շատ արտարժույթ, քան նախատեսված էր, որն էլ, փոխարժեքի ոչ զգալի տատանումների պայմաններում, վկայում է հաշվետու ժամանակահատվածում արտարժութային ներհոսքի ծավալների զգալի մեծացման մասին:






Բանկերի նկատմամբ ԿԲ պահանջների ցուցանիշը կրել է նաև Վերակառուցման վարկերի բանկի (KfW) միջոցներից առևտրային բանկերին տրամադրված վարկերի (600 մլն դրամ) և բանկերին լոմբարդային վարկերի տրամադրման (300 մլն դրամի լոմբարդային վարկի տրամադրում) ազդեցությունները:

ՊՊ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Եռամսյակի ընթացքում ՊՊ տոկոսադրույքները շարունակել են դրսևորել նվազման միտումներ: Այսպես. 3-6-ամսյա պետական պարտատոմսերի միջին տարեկան տոկոսադրույքն աստիճանաբար նվազել է և սեպտեմբերին կազմել 17.7% (հունիսին՝ 19.4%), իսկ 9-12-ամսյա պետական պարտատոմսերի միջին տարեկան տոկոսադրույքը՝ 19% (հունիսին՝ 20%): Պետական պարտատոմսերի զուտ տեղաբաշխման ծավալները գերազանցել են նախորդ եռամսյակի համապատասխան ցուցանիշը մոտ 3 անգամ (3-րդ եռամսյակի զուտ տեղաբաշխումը կազմել է ավելի քան 1 մլրդ 900 մլն դրամ՝ նախորդ եռամսյակի շուրջ 460 մլն դրամի համեմատ): Ավելին, պետական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալներում գերակշռել են ավելի մեծ ժամկետայնության պարտատոմսեր, որը պետք է նպաստեր տոկոսադրույքների բարձրացմանը: Այսպես. ինչպես երկրորդ, այնպես էլ երրորդ եռամսյակներում 3-6-ամսյա պետական պարտատոմսերի կշիռները տեղաբաշխման ներկայացված արժեթղթերի ծավալում համապատասխանաբար կազմել են 22.7% և 4.6%, իսկ երրորդ եռամսյակում տեղաբաշխված ավելի բարձր ժամկետայնության պարտատոմսերի ծավալները գերազանցել են երկրորդ եռամսյակի համապատասխան ցուցանիշը: Այսպիսով, պետական պարտատոմսերի տոկոսադրույքի փոփոխությունն առավելապես կրել է բանկային իրացվելիության աճի ազդեցությունը: Այս երևույթը կարող է բացատրվել նրանով, որ բանկային ավանդների աճին զուգահեռ տեղի է ունենում տնտեսության վարկավորման ծավալների նվազում (նախորդ տարեվերջի համեմատ սեպտեմբերի վերջի դրությամբ բանկային ավանդների ծավալներն աճել են 14.6%-ով, իսկ տնտեսության վարկավորման ծավալները՝ նվազել 1.8%-ով): Արդյունքում, ներդրման այլընտրանքային հնարավորությունների բացակայության պայմաններում, բանկային իրացվելիությունն առավելապես ուղղվել է պետական պարտատոմսերի շուկա՝ նպաստելով պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազմանը:





ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Եվ՛ ավանդային, և՛ վարկային շուկաներում պահպանվել է նախորդ տարվա սկզբից դրսևորված նվազման ընդհանուր միտումը՝ միայն եռամսյակի առանձին ամիսներին դրամային և արտարժութային տոկոսադրույքների վարքագծային որոշ տարբերություններով: Արտարժութային ավանդների տոկոսադրույքները, ի տարբերություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պահպանած գրեթե կայուն մակարդակի, բոլոր ամիսներին նվազել են՝ սեպտեմբերին հասնելով 11.5%-ի: Ընդ որում, տոկոսադրույքների էական նվազումն արձանագրվել է սեպտեմբերին: Վերջինս կարող է պայմանավորված լինել օգոստոսին արտարժութային ավանդների զգալի աճով, որն էլ ստիպել է բանկերին հաջորդ ամսվա ընթացքում արտարժութային ավանդներ ներգրավել ավելի ցածր տոկոսադրույքով: Ի տարբերություն արտարժութային ավանդների տոկոսադրույքների՝ վարկերի տոկոսադրույքները դրսևորել են գրեթե կայուն վարքագիծ. միայն փոքր-ինչ բարձրացում է արձանագրվել օգոստոսին: Նման պարագայում անգամ, արտարժութային վարկերի տոկոսադրույքը ցածր է եղել նախորդ եռամսյակում ձևավորված մակարդակից (արտարժութային վարկերի տոկոսադրույքը սեպտեմբերին կազմել է 29.4%՝ հունիսի 30.7%-ի համեմատ):

Հաշվետու ժամանակահատվածում դրամային ավանդների տոկոսադրույքը կտրուկ նվազել է: Թեև դրամային ավանդների ծավալները նախորդ եռամսյակի համեմատ զգալիորեն ավելացել են, այնուհանդերձ դրանց կշիռը ավանդների ընդհանուր կառուցվածքում մնում է ցածր: Հետևաբար կարելի է եզրա-


կացնել, որ դրամային ավանդների տոկոսադրույքի նվազման պատճառ են հանդիսացել ավելի շուտ արտարժութային ավանդների տոկոսադրույքի նվազման և կապիտալի ներհոսքի սպասվող ծավալների հետ կապված՝ փոխարժեքի արժեքավորման սպասումները, քան դրամային ավանդների ծավալների աճը: Դրամային ավանդների տոկոսադրույքը եռամսյակի ընթացքում նվազել է 3.4 տոկոսային կետով՝ սեպտեմբերին կազմելով 17.6% (արտարժութային ավանդների տոկոսադրույքը նվազել է 1.3 տոկոսային կետով): Անդրադառնալով դրամային վարկերի տոկոսադրույքին՝ նշենք, որ այն էական փոփոխություն չի կրել՝ որոշակի աճ է արձանագրվել միայն սեպտեմբերին:






Տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (սպրեդը) դրսևորել է առավել հարթ վարքագիծ, քան նախորդ եռամսյակում: Դրամային սպրեդը եռամսյակի ընթացում աստիճանաբար ընդլայնվել է՝ նախորդ եռամսյակի վերջի 10%-ից սեպտեմբերի վերջին հասնելով 12%-ի՝ առավելապես կրելով դրամային ավանդների նվազման ազդեցությունը: Իսկ արտարժույթով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տոկոսադրույքների տարբերությունը հուլիսին կրճատվել է՝ պայմանավորված վարկերի տոկոսադրույքների նվազմամբ, այնուհետև, արտարժութային ավանդների տոկոսադրույքի նվազման հետևանքով աճել է՝ եռամսյակի վերջին կազմելով 18%:

ԿԲ խորհուրդը, պետական պարտատոմսերի առաջնային շուկայի տոկոսադրույքների միտումներին զուգընթաց, իջեցրել է ռեպո տոկոսադրույքը՝ օգոստոսին սահմանելով 15%՝ նախորդ եռամսյակի վերջի 16%-ի համեմատ, իսկ արժեթղթերի տոկոսադրույքը սահմանել 16%՝ նախորդ եռամսյակի վերջի 18%-ի համեմատ: Նշված տոկոսադրույքները անփոփոխ են մնացել եռամսյակի մնացած ժամանակահատվածում:






Անդրադառնալով մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքին՝ նշենք, որ ավանդների տոկոսադրույքի փոփոխություն չի արձանագրվել՝ պահպանվել է 8% մակարդակը, իսկ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը 40%-ից օգոստոսին իջեցվել է 35%-ի, որն էլ պահպանվել է մինչև եռամսյակի վերջ:

Երրորդ եռամսյակում իրականացված դրամավարկային քաղաքականությունը ծրագրվածի համեմատ եղել է առավել ընդլայնողական: Դա է վկայում փողի բազայի աճի՝ ծրագրվածի համեմատ ավելի բարձր տեմպերի ապահովումը:

Դրամավարկային պայմանների փոփոխության աստիճանն արտահայտում է նաև դրամավարկային պայմանների ինդեքսի ցուցանիշը, որը զգալիորեն նվազել է և՛ նախորդ եռամսյակի, և՛ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Դրամավարկային պայմանների ինդեքսի նվազումը ավելի շատ պայմանավորվել է իրական արդյունավետ փոխարժեքի արժեզրկմամբ, քան տոկոսադրույքների նվազման ազդեցությամբ: Այսպես, դրամավարկային պայմանների ինդեքսը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 5.7%-ով, որից 4.6 տոկոսային կետը բաժին է ընկել իրական արդյունավետ փոխարժեքին, իսկ, 1.1-ը՝ տոկոսադրույքի գործոնին: Ընդ որում, իրական արդյունավետ փոխարժեքի նվազումը հիմնականում կրել է ՀՀ սպառողական գների ինդեքսի նվազման ազդեցությունը:




2001 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ ԿԲ-ն շարունակել է տարվա սկզբին որդեգրած դրամավարկային ընդլայնողական քաղաքականությունը: Այս պարագայում բանկերի թղթակցային հաշիվների մնացորդները դրսևորել են աստիճանական աճի միտում՝ հուլիս ամսվա մոտ 12671.0 մլն դրամից օգոստոսին հասնելով 12960.0 մլն դրամի, իսկ սեպտեմբերին 13662.0 մլն դրամի, որը իր հերթին հանգեցրել է բանկային համակարգի ավելցուկային իրացվելիության մակարդակի աճի:

ՀՀ ԿԲ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կենտրոնական բանկը ներքին ֆինանսական շուկայում հիմնականում հանդես է եկել իրացվելիություն ներարկող գործիքների կիրառմամբ՝ գնելով արտարժույթ և պետական արժեթղթեր, ինչպես նաև իրականացնելով ռեպո գործառնություններ:

Երրորդ եռամսյակում ԿԲ-ն կնքել է 3604 մլն դրամի ռեպո գործառնություն: Սահմանված 16% եկամտաբերությամբ՝ հուլիս և օգոստոս ամիսներին կնքվել է, համապատասխանաբար՝ 1775 մլն և 416 մլն դրամի գործարք, իսկ սեպտեմբերին, արդեն 15%-ով, իրականացվել է 1414 մլն դրամի ռեպո գործարք: Միաժամանակ, եռամսյակի ընթացքում ՀՀ ԿԲ-ն ՊՊ երկրորդային շուկայից գնել է 3026.74 մլն դրամի արժեթուղթ՝ սահմանված 17.36% եկամտաբերությամբ:


Ինչպես նախորդ, այնպես էլ այս եռամսյակում, պայմանավորված բանկային համակարգի ավելցուկային իրացվելիության մակարդակով, բավականին ցածր էր լոմբարդային վարկերի նկատմամբ պահանջարկը: Եռամսյակի ընթացքում միայն մեկ բանկի է տրամադրվել վարկ (մոտ 300 մլն դրամի՝ սահմանված տարեկան 35% -ով):




ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը եռամսյակի ընթացքում դրսևորել է տատանողական վարքագիծ, և եռամսյակն ավարտվել է փոխարժեքի ոչ էական արժեքավորմամբ՝ 0.02% (554.63 դրամից 554.14 դրամ, միջին շեղում՝ 0.81 դրամ, վարիացիա՝ 0.66):

ՀՀ կենտրոնական բանկը հուլիս - օգոստոս ամիսներին արտարժույթի միջբանկային շուկայում իրականացրել է արտարժույթի առքի գործառնություններ: Այսպես, հուլիսին Կենտրոնական բանկը գնել է 1.1 մլն ԱՄՆ դոլար՝ 555.00 դրամ փոխարժեքով, օգոստոսին՝ 4.3 մլն ԱՄՆ դոլար՝ 554.23 դրամ միջին կշռված փոխարժեքով:




Միաժամանակ, Կենտրոնական բանկը մեծաքանակ արժութային գործառնություններ է իրականացրել՝ որպես Կառավարության միջնորդ: Երեք ամսվա ընթացքում ԿԲ-ն ՀՀ կառավարությունից գնել է 7.743 մլն ԱՄՆ դոլար՝ 550.50 դրամ միջին կշռված փոխարժեքով, վաճառել՝ 12.107 մլն ԱՄՆ դոլար՝ 555.67 դրամ միջին կշռված փոխարժեքով:



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱ

2001 թ. երրորդ եռամսյակի ընթացքում իրականացվել է պետական կարճաժամկետ պարտատոմսերի 14 թողարկում՝ 10200.0 մլն դրամ ընդհանուր ծավալով, որից 600.0 մլն դրամը՝ 92-182 օր շրջանառության ժամկետով, 4700.0 մլն դրամը՝ 183-273 օր շրջանառության ժամկետով, 4900 մլն դրամը՝ 274-364 օր շրջանառության ժամկետով և պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 2 թողարկում՝ 2900.0 մլն դրամ ընդհանուր ծավալով:




Շարունակվել են պետական պարտատոմսերի շուկայում տարվա սկզբից ձևավորված միտումները՝ պահանջարկի աճը և ըստ այդմ՝ եկամտաբերության անկումը: Նախորդ եռամսյակի համեմատությամբ

պետական պարտատոմսերի նկատմամբ ձևավորվել է պահանջարկի ավելի բարձր մակարդակ: ՊԿՊ նկատմամբ պահանջարկն ավելացել է 9.06%-ով, իսկ արժեկտրոնային պարտատոմսերի նկատմամբ՝ 7.98%-ով՝ համապատասխանաբար կազմելով թողարկման ծավալի 261.99 և 193.97%-ը, չնայած այն հանգամանքին, որ ՊԿՊ թողարկման ծավալներն ավելացել են 800 մլն դրամով, իսկ սեպտեմբերին թողարկվել են 2.5 տարի ժամկետայնությամբ մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք ՀՀ պարտատոմսերի շուկայում համարվում են բավականին երկարաժամկետ արժեթղթեր:


Արդյունքում, շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 2105.463 մլն դրամով՝ կազմելով 28846.807 մլն դրամ:

Ձևավորված բարձր պահանջարկի պայմաններում, նախորդ եռամսյակի համեմատ արձանագրվել է պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների անկում: Այսպես՝ երկրորդ եռամսյակում միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 21.4%, իսկ երրորդում՝ 18.11%:




ՊՊ երկրորդային շուկայում ևս դրսևորվել են առաջնային շուկայում նկատված միտումները: Իրականացված գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 2.3% տոկոսային կետով՝ կազմելով 18.01%:

Ընդհանուր առմամբ, հաշվետու եռամսյակում եկամտաբերության կորի ամբողջ երկայնքով նկատվել է տոկոսադրույքների անկում, իսկ եռամսյակի վերջին այն, այնուամենայնիվ, եղել է նախատեսված 17%-ի սահմաններում:



Արձանագրվել է նաև իրականացված գործառնությունների ծավալների աճ 3205.8 մլն դրամով՝ կազմելով 13905.04 մլն դրամ: Աճը պայմանավորված էր նաև ՀՀ ԿԲ կողմից ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնություններով, որոնք կազմել են ընդհանուր ծավալի 21.77%-ը (3026.736 մլն դրամ): Եռամսյակի ընթացքում օրական միջին հաշվով կնքվել է մոտ 6 գործարք՝ 190 մլն դրամ ծավալով, որը շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ընդամենը 0.65%-ն է:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս եռամսյակի ընթացքում որոշ չափով կրճատվել են պետական արժեթղթերում ոչ ռեզիդենտների ներդրումների ծավալները (2.22%-ով): Արդյունքում, եռամսյակի վերջի դրությամբ, ռեզիդենտներին պատկանող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ամբողջ ծավալի մոտ 90.75%-ը՝ 26178.52 մլն դրամ, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 9.25%-ը՝ 2668.285 մլն դրամ:



ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները

ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԸ

2001 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Հայաստանում գործել են 29 բանկեր՝ 241 մասնաճյուղերով:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալը երրորդ եռամսյակի ընթացքում նվազել է 15.5%-ով և կազմել 19.6 մլրդ դրամ: Կապիտալի նվազումը հիմնականում պայմանավորված է սնանկացման գործընթացում գտնվող բանկերի վնասաբեր գործունեությամբ:

Բանկային համակարգի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանում ավելացել է 5.2 %-ով և կազմել 33.3 մլրդ դրամ, իսկ օտարերկրյա կապիտալի մասնակցությունը կազմել է 44.6%:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

30.09.01 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող բանկերը ստացել են 31.5 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 48.8 մլրդ դրամի չափով ծախսեր: Ընթացիկ տարվա ինն ամիսների գործունեության արդյունքում բանկերի չբաշխված շահույթը (վնասը), շահութահարկի գծով 394.5 մլն դրամի չափով ծախս կատարելուց և 283.2 մլն դրամի շահաբաժիններ հաշվարկելուց հետո կազմել է -18.0 մլրդ դրամ:

30.09.01թ. դրությամբ շահույթով աշխատել են 15 բանկեր (էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան», Հայգյուղփոխբանկ, Հայագրոբանկ, «Պրոմեթեյ», «Ինեկո», «Կոնվերս», «Ռիա», «Անելիք», «Գլաձոր», «Արցախ», Հայինվեստբանկ, «ԻԹԲ» միջազգային առևտրային բանկ, Զարգացման հայկական բանկ, Հայէկոնոմբանկ, «Ադանա»), որոնց չբաշխված շահույթը կազմել է 1.9 մլրդ դրամ: Վնասով աշխատել են 14 բանկեր (Հայներարտբանկ, Միջինվեստբանկ, «Կրեդիտ-Սերվիս», «Կրեդիտ-Երևան», Առէկսիմբանկ, «Հունաստանի ԱԲ (Հայաստան)», «Ակունք», Արդշինբանկ, «Մելլաթ», «Տրաստ», Հայխնայբանկ, «Լենդ», «Միավորված», Հայկապ), որոնց վնասը կազմել է 19.9 մլրդ դրամ:

Վնասաբեր գործունեություն ծավալած բանկերի ընդհանուր վնասի 53.2%-ը բաժին է ընկել «Միավորված» բանկին:

Բանկերի եկամուտների 64.7%-ը բաժին է ընկել տոկոսային եկամուտներին, 17.3%-ը՝ ոչ տոկոսային եկամուտներին և 18.0%-ը՝ ծախսերի հաշվին դուրս գրված ակտիվների վերադարձին:

Բանկերի ծախսերի 27.6%-ը բաժին է ընկել տոկոսային ծախսերին, 21.7%-ը՝ ոչ տոկոսային ծախսերին և 50.7%-ը՝ ակտիվների հնարավոր կորուստների դուրսգրման պահուստին կատարված մասհանումներին:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ


2001 թ. երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն աճել են 1.9%-ով և 30.09.01 թ. դրությամբ կազմել 225.4 մլրդ դրամ: Ընդ որում, բարձր իրացվելի ակտիվներն աճել են 0.4%-ով և կազմել 66.9 մլրդ դրամ: Բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների հարաբերակցությունը, նախորդ եռամսյակի տվյալների համեմատ, նվազել է 0.4 տոկոսային կետով՝ 30.09.01 թ. դրությամբ կազմելով 29.7%: Հաշվետու եռամսյակի ընթացքում պետական արժեթղթերում ներդրումների ծավալն աճել է 4.4%-ով և 30.09.01 թ. դրությամբ կազմել 16.7 մլրդ դրամ:

Եռամսյակի ընթացքում 2.7%-ով աճել է եկամտաբեր ակտիվների ծավալը՝ կազմելով 131.3 մլրդ դրամ, իսկ դրանց տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում աճելով 0.5 տոկոսային կետով՝ կազմել է 58.3%: Այս առումով, ակտիվների կազմում կարևորվում է վարկային ներդրումների որակը և տեսակարար կշիռը: Վարկային ներդրումները եռամսյակի ընթացքում աճելով 2.9%-ով՝ 30.09.01թ. դրությամբ կազմել են 113.5 մլրդ դրամ: Վարկային ներդրումների հիմնական մասը՝ 84.4%-ը, տրամադրվել է ՀՀ ռեզիդենտներին:

Վարկային ներդրումների աճը ուղեկցվել է ժամկետանց վարկերի 0.4% նվազմամբ, որոնց մեծությունը եռամսյակի վերջին կազմել է 14.0 մլրդ դրամ կամ բանկային համակարգի ընդհանուր կապիտալի 71.1%-ը:

Ըստ ռիսկի խմբերի վարկային ներդրումների և դրանց հավասարեցված ակտիվների դասակարգման, եռամսյակի ընթացքում վարկային պորտֆելում 0.9 տոկոսային կետով նվազել է դասակարգված վարկերի տեսակարար կշիռը և կազմել 5.3%: Արդյունքում, 30.09.01 թ. դրությամբ վարկային պորտֆելն

ունեցել է հետևյալ կառուցվածքը. ստանդարտ վարկերը կազմել են վարկային պորտֆելի 94.7%-ը, ոչ ստանդարտ վարկերը՝ 3.2%-ը, կասկածելի վարկերը՝ 2.1%-ը:




ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները եռամսյակի ընթացքում ավելացել են 3.9%-ով և 30.09.01 թ. դրությամբ կազմել 205.7 մլրդ դրամ: Բանկերի ստանձնած ցպահանջ պարտավորությունները (բացառությամբ բանկերից ներգրավված ցպահանջ միջոցների) եռամսյակի ընթացքում աճել են 7.9%-ով՝ կազմելով 61.6 մլրդ դրամ, ընդ որում, ցպահանջ ներգրավված միջոցների 72.4%-ը ներգրավված են արտարժույթով:

Իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային միջոցներն աճել են 3.9%-ով և կազմել 51.7 մլրդ դրամ, որոնց 76.1%-ը ներգրավված են արտարժույթով:


Ֆիզիկական անձանց ավանդները նվազել են 4.5%-ով՝ կազմելով 46.7 մլրդ դրամ, ընդ որում, արտարժույթով ներգրավված ավանդները նվազել են 4.0%-ով, իսկ դրամով ներգրավվածները՝ 9.3%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում բանկերից ներգրավված ժամկետային միջոցներն աճել են 2.1%-ով և կազմել 24.9 մլրդ դրամ:



2001 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական շրջանառության ծավալը կազմել է մոտ 4.0 մլրդ դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է մոտ 1.4 մլրդ դրամով և մոտ 0.2 մլրդ դրամով՝ նախորդ եռամսյակի համեմատ), իսկ միջին օրական քանակը՝ մոտ 3110 (մոտ 731-ով նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ և մոտ 306-ով ավելացել նախորդ եռամսյակի համեմատ): Ընդ որում, ՀՀ գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումներն կազմել են այդ ծավալի 49%-ը և քանակի 79%-ը:

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակի և ծավալի դինամիկան



ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Համակարգի ընդհանուր գործունեությունը

2001 թ. երրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 199, այդ թվում՝ ընդգրկվել են Գանձապետարանն իր 44 բաժանմունքներով և 29 առևտրային բանկեր՝ իրենց 122 մասնաճյուղերով: Համակարգի մասնակից մեկ առևտրային բանկի կատարած էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են տվյալ բանկի ընդհանուր վճարումների ծավալի 90%-ը, քանակի 96%-ը:

Էլեկտրոնային վճարումների համակարգով միջին հաշվով օրական իրականացվել է մոտ 3020 դրամական փոխանցում (նախորդ եռամսյակի համեմատ 310 փոխանցումով ավելի)՝ 2950 մլն դրամ ծավալով (նախորդ եռամսյակի համեմատ 17 մլն դրամով ավելի): Փոխանցումների քանակային և ծավալային աճի հետ կապված՝ նվազել է մեկ էլեկտրոնային փոխանցման միջին մեծությունը՝ կազմելով մոտ 980 հազ. դրամ: Համակարգով մեկ վճարման միջին մեծության նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախկինում զուտ վճարումների համակարգով նախաձեռնվող մանր վճարումները ներկայումս իրականացվում են էլեկտրոնային եղանակով:

Էլեկտրոնային վճարումների համակարգում վճարումների ծավալի 77.3%-ը և քանակի 79.5%-ը իրականացվել են վճարման անհատական հանձնարարականներով (ՀՏ100, ՀՏ120), իսկ մնացած մասը՝ խմբային վճարումների հանձնարարականներով (ՀՏ122, ՀՏ123, ՀՏ131, ՀՏ132, ՀՏ202), ընդ որում, վերջիններս ունեն աճի միտում. նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ էլեկտրոնային վճարումների ծավալային կառուցվածքում ավելացել են 18.3, իսկ քանակային կառուցվածքում՝ 19.7 տոկոսային կետով:

Էլեկտրոնային վճարումների համակարգում նախաձեռնված վճարումների ծավալի 0.47%-ը և քանակի 0.05%-ը (89 փոխանցում՝ 874 մլն դրամ ծավալով) մերժվել են, ընդ որում, վճարումների ծավալի 0.36%-ը և քանակի 0.01%-ը (համակարգի 7 մասնակիցների կողմից նախաձեռնված 26 փոխանցում՝ 679 մլն դրամ ծավալով) մերժվել են անբավարար իրացվելիության պատճառով:

2001 թ. երրորդ եռամսյակի ընթացքում քննարկվել է էլեկտրոնային վճարումների համակարգում իրացվելիության արդյունավետ կառավարման, ինչպես նաև սահմանափակ իրացվելիության դեպքում վճարումներն ըստ սահմանված առաջնահերթության իրականացնելու հնարավորության հարցը, ինչին ուղղված կլինեն առաջիկա աշխատանքները:

Համակարգի անվտանգության բարձրացում

Երրորդ եռամսյակի ընթացքում ավարտվել է էլեկտրոնային վճարումների համակարգում տեղեկատվության պաշտպանության բարձր մակարդակ ապահովող «Արաքս-ԿԲ» սարքի փորձնական շահագործումը: Սարքը նախատեսվում է համակարգում վերջնականապես ներդնել մինչև 2001 թ. վերջը:

Միջբանկային համակարգչային ցանց

2001 թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ CBANet ցանցի բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 225, այդ թվում՝ ցանցի ծառայություններից օգտվել են ՀՀ տարածքում գործող 30 առևտրային բանկեր (գլխամասային բաժանմունքներ և 142 մասնաճյուղեր), Գանձապետարանը (գլխամաս և 44 տեղական բաժանմունքներ), Արմենիան Քարդ ընկերությունը, ՀՀ կենտրոնական բանկի 2 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ պետական եկամուտների նախարարությունը, ՀՀ 3 մաքսատներ և Հայաստանի բանկերի միությունը:

CBANet միջբանկային համակարգչային ցանցն աշխատել է առանց լուրջ խափանումների. արձանագրվել է առանձին հատվածներում ցանցի անսարքության 23 դեպք՝ կապուղիների հետ կապված պրոբլեմների պատճառով, առևտրային 3 բանկի կողմից վիրուսակիր ֆայլերի ուղարկման 35 դեպք: Վերջինիս կապակցությամբ վերոհիշյալ բանկերին ցույց է տրվել վիրուսների վնասազերծման մեթոդական օգնություն:

CBANet միջբանկային համակարգչային ցանցի զարգացման նպատակով իրականացված համալիր աշխատանքների արդյունքում փոփոխվել են ցանցի կենտրոնական հանգույցները, ինչի շնորհիվ այդ հատվածներում մեծացել է ցանցի հուսալիությունն ու թողունակությունը, իսկ փոխանակվող տեղեկատվության արագությունն ավելացել է մոտ 10 անգամ: Միևնույն ժամանակ, ծրագրային որոշ փոփոխությունների արդյունքում բարձրացել է CBANet ցանցի անվտանգության մակարդակն ու բարելավվել ցանցի ծառայությունների մատուցման մակարդակը:

ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Համակարգի ընդհանուր գործունեությունը

2001 թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել 29 առևտրային բանկեր, ՀՀ գանձապետարանը և ՀՀ կենտրոնական բանկը: Թղթային եղանակով վճարումներին նախապատվություն չի տրվել, մասնավորապես. 2001թ. երրորդ եռամսյակի ընթացքում թղթային վճարումներ իրականացնող մեկ բանկի կատարած թղթային վճարումները միջին հաշվով կազմել են տվյալ բանկի ընդհանուր վճարումների ծավալի 13%-ը և քանակի 10%-ը:

Թղթային եղանակով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 7-ով՝ կազմելով 60, իսկ ծավալը նվազել է 202 մլն դրամով՝ կազմելով 713 մլն դրամ, որի հետ կապված՝ նվազել է մեկ թղթային փոխանցման միջին մեծությունը՝ կազմելով մոտ 11.97 մլն դրամ:

Թղթային եղանակով իրականացված վճարումներում գերակշռել են կրեդիտային վճարային գործիքներով կատարված վճարումները, սակայն գրանցվել է նաև չեկերով և վճարային պահանջագրերով կատարված 4 վճարում:

ԶՈՒՏ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Համակարգի ընդհանուր գործունեությունը

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով զուտ (քլիրինգային) վճարումներ է նախաձեռնել 7 առևտրային բանկ, ընդ որում, զուտ վճարումներ իրականացնող մեկ բանկի կողմից զուտ եղանակով կատարված վճարումները միջին հաշվով կազմել են տվյալ բանկի ընդհանուր վճարումների ծավալի և քանակի 2%-ը:

Նախորդ եռամսյակի համեմատ, զուտ վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը նվազել է 10-ով՝ կազմելով 25, իսկ ծավալն ավելացել է 7 մլն դրամով՝ կազմելով 14 մլն դրամ, ինչի հետ կապված՝ մոտ 360 հազ. դրամով մեծացել է մեկ զուտ վճարան միջին գումարը՝ կազմելով 560 հազ. դրամ:

Համակարգով վճարումներն, ընդհանուր առմամբ, ունեցել են նվազման միտում: Վճարումներն իրականացվել են օրական երկու սեանսով, որոնցից ամենաարդյունավետը շարունակել է մնալ քլիրինգի II սեանսը, որի ընթացքում կատարված վճարումները կազմել են զուտ վճարումների քանակի և ծավալի 87%-ը:

Ժամանակա-հատվածը	Համախառն				Զուտ		Պետ. արժեթղթ. հաշվառմ. և հաշվարկ. իրակ. համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով	
	էլեկտրոնային		թղթային							
	Գումար *(մլն դրամ)*	Քանակ	Գումար *(մլն դրամ)*	Քանակ	Գումար *(մլն դրամ)*	Քանակ	Գումար *(մլն դրամ)*	Քանակ	Գումար *(մլն դրամ)*	Քանակ
2001 - I եռ.	188.507	163.716	58.991	3.883	853	4.062	15.029	493	263.380	172.154
տեսակարար կշիռը վճարումներում (%)	71,6	95,1	22,4	2,3	0,3	2,4	5,7	0,3	100	100
2001 – II եռ.	184.539	170.512	57.633	3.354	451	2.229	18.696	551	261.319	176.646
տեսակարար կշիռը վճարումներում (%)	70,6	96,5	22,1	1,9	0,2	1,3	7,2	0,3	100	100
2001 – III եռ.	185.591	190.140	44.912	3.752	897	1.606	17.960	452	249.361	195.950
տեսակարար կշիռը վճարումներում (%)	74,4	97,0	18,0	1,9	0,4	0,8	7,2	0,2	100	100

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

Հուլիսին ՀՀ տարածքում գործող 10 առևտրային բանկերի, ՀՀ կենտրոնական բանկի և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքվել են «Հայաստանի ֆոնդային բորսայում կնքված՝ արժեթղթերի առքուվաճառքի գործարքների վերջնահաշվարկի կատարման» եռակողմ պայմանագրեր, որոնցով սահմանվել է այդ արժեթղթերի առքուվաճառքի գործարքների վերջնահաշվարկի արարողակարգը:

Եռակողմ պայմանագրերի կնքման պահից սկսած՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան հանդիսանում է Հայաստանի ֆոնդային բորսայում կնքված՝ արժեթղթերով գործարքների դրամական և դեպո պարտավորությունների քլիրինգը և կորպորատիվ արժեթղթերի վերջնահաշվարկն իրականացնող մարմին, իսկ ՀՀ կենտրոնական բանկը՝ այդ գործարքների դրամական վերջնահաշվարկն ապահովող հաշվարկային բանկ և պետական արժեթղթերի դեպո վերջնահաշվարկն իրականացնող մարմին:

Չնայած արժեթղթերով գործառնությունների իրականացման ներկայացված կարգին՝ ներկայումս այդ գործառնությունների գերակշռող մասը դեռևս իրականացվում է Հայաստանի ֆոնդային բորսայից դուրս՝ միջբանկային շուկայում:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2001 թ. երրորդ եռամսյակի ընթացքում շահագործման մեջ է գտնվել Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի «Պետական կարճաժամկետ պարտատոմսերի դեպո հաշիվների վարման, առաջնային տեղաբաշխման և մարման» մոդուլը, որը գործել է առանց լուրջ տեխնիկածրագրային խափանումների: Եռամսյակի վերջի դրությամբ համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 7 գործակալ և 13 դիլեր բանկեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկող), Գանձապետական պահառուն և ՀՀ կենտրոնական բանկը (գլխավոր պահառու): Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի համար համակարգում բացվել է դեպո հաշիվ (ՀՀ կենտրոնական բանկում՝ նաև դրամական հաշիվ), որը նախատեսված է Հայաստանի ֆոնդային բորսայում կնքված՝ պետական արժեթղթերի առքուվաճառքի գործարքների արդյունքում ձևավորված դեպո պարտավորությունների մարման վերջնահաշվարկն ապահովելու համար:

2001 թ. երրորդ եռամսյակի ընթացքում համակարգի «Պետական արժեկտրոնային պարտատոմսերի դեպո հաշիվների վարման, առաջնային տեղաբաշխման և մարման» մոդուլն անցել է փորձնական շահագործման փուլը, այն նախատեսվում է շահագործման հանձնել սույն տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում:

Գանձապետական պահառու


2001 թ. երրորդ եռամսյակի ընթացքում (25.09.2001թ.-ից սկսած) Գանձապետական պահառու համակարգի գործունեության և կառավարման գործառույթը ՀՀ կենտրոնական բանկից ամբողջությամբ փոխանցվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը: Գանձապետական պահառու համակարգն այսուհետև հանդես է գալու ՀՀ կենտրոնական բանկի հաճախորդի կարգավիճակով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՐՏԵՐՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող 10 առևտրային բանկերի անմիջական ջանքերով 2001 թ. մայիսից սկսվել է Հայաստանում քարտերով վճարումների միասնական՝ «Արմենիան Քարդ» համակարգի շահագործումը Երևան քաղաքում:

2001 թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ համակարգի մասնակից բանկերի թիվը կազմել է 11, որոնցից 5-ի կողմից թողարկվել են 733 «ԱրՔա» քարտեր: Համակարգի գործարկման պահից մինչև երրորդ եռամսյակի վերջն ընկած ժամանակահատվածը «ԱրՔա» քարտերով իրականացվել է 2268 գործարք՝ մոտ 34.5 մլն դրամ ծավալով:

2001 թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ «ԱրՔա» քարտերի սպասարկման ցանցում գրանցված ավտոմատ գանձման մեքենաների՝ ԱԳՄ-ների (ATM) քանակը կազմել է 3, կանխիկի տրամադրման կետերինը՝ 20, առևտրի և սպասարկման կետերինը՝ 14:



Համակարգի շահագործման աշխատանքների հետ միաժամանակ, բանակցություններ են տարվել «Արմենիան Քարդ» համակարգի անդամակցությունը EUROPAY միջազգային քարտային համակարգին ապահովելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի թողարկել համատեղ «ԱրՔա» քարտեր, որոնք կարող են սպասարկվել նաև EUROPAY-ի ցանցում:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

SWIFT համակարգին է միացվել «Անելիք» բանկը և եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում SWIFT-ով աշխատել է 19 բանկ:

SWIFT համակարգի նոր քաղաքականության պահանջներից ելնելով (IP տեխնոլոգիաներին անցնելու և հուսալիության բարձրացման հետ կապված)՝ վերջինիս անդամակցող բոլոր ֆինանսական կազմակերպությունների, այդ թվում՝ նաև անդամակցող ՀՀ բանկերի կողմից իրականացվել են տեխնիկա-ծրագրային վերափոխման համալիր աշխատանքներ:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

2001 թ. երրորդ եռամսյակի ընթացքում քննարկվել են ՀՀ վճարահաշվարկային բնագավառի կարգավորման և վերահսկման առումով ՀՀ կենտրոնական բանկի հետագա գործողությունները և արդյուն-

քում մշակվել է «Վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների և վճարահաշվարկային համակարգերի կարգավորման և վերահսկման վերաբերյալ» հայեցակարգը: Ըստ հայեցակարգի՝ ՀՀ կենտրոնական բանկի առջև խնդիր է դրվել պարզաբանել իր դիրքորոշումը ՀՀ տարածքում վճարահաշվարկային ծառայությունների մատուցման գործունեության լիցենզավորման, կանոնակարգման, հատուկ պահանջների (չափորոշիչների) մշակման, հաշվետվության և վերահսկողության հարցերի հետ կապված: Թվարկված հարցերի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դիրքորոշումը կարտացոլվի համապատասխան նորմատիվային փաստաթղթերում, որոնց մշակման ժամանակացույցն արդեն հաստատվել է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից:

ԲԱՆԿԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Վարկային ռեգիստր

ՀՀ տարածքում գործող բանկերում վարկային ռիսկի նվազեցման պահանջներից ելնելով՝ տարվա սկզբին ՀՀ կենտրոնական բանկը նախաձեռնել էր «Վարկային ռեգիստր» համակարգի ստեղծումը: Համակարգի նպատակն է հնարավորություն ստեղծել, որպեսզի բանկերը պատկերացում կազմեն վարկառուի վարկարժանության մասին:

2001թ. երրորդ եռամսյակի ընթացքում ամփոփվել են համակարգի նախագծման աշխատանքները. ձևավորվել է «Վարկային ռեգիստր» համակարգի կառուցման ընդհանուր հայեցակարգը, որում սահմանված են համակարգին ներկայացվող պահանջները, համակարգի կառուցման ընդհանուր սկզբունքները և ֆորմատները: Սկսվել են համակարգի տեխնիկական առաջադրանքների ձևավորման և ծրագրավորման աշխատանքները:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2001 թ. հունվար-սեպտեմբերին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Ամվանում	*Հուլիս*	*Օգոստոս*	*Սեպտեմբեր*	*2001 թ. հունվար-սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2000 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	111397.8	113497.3	161934.2	109.9
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	104.3	104.1	103.8	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)**	389.6	478.2	604.6	110.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	24883.9	26581.1	28395.0	103.8
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	473.4	497.8	477.4	96.9
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	48642.0	46544.5	38939.8	111.8
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	41230.6	44532.4	42761.0	115.2
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	10908.4	9417.1	13652.7	117.4
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	63324.0	70248.2	61833.4	103.8*
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	61978.0	66584.2	63940.0	106.4*
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)***	22556	22724	23070	109.7**
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)***	1428.4	1428.2	1427.9	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)***	150.5	149.7	149.0	-
Գործազրկության մակարդակը (%)	10.2	10.1	10.0	-

II. Արտաքին հատված

Ամվանում	*Հուլիս*	*Օգոստոս*	*Սեպտեմբեր*	*2001 թ. հունվար-սեպտեմբերը 2000 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(FOB. մլն ԱՄՆ դոլար)*	28.9	29.1	25.8	111.6
Ներմուծում *(CIF. մլն ԱՄՆ դոլար)*	82.8	67.4	72.2	97.7
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	53.9	38.3	46.4	90.5

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	104.6	100.7	99.6	105.1
Փետրվար	99.1	102.4	100.0	99.5
Մարտ	100.02	98.9	100.0	97.4
Ապրիլ	99.90	101.4	100.0	99.7
Մայիս	101.60	99.5	100.0	93.6
Հունիս	98.7	99.5	100.0	75.2
Հուլիս	97.3	100.9	107.2	83.2
Օգոստոս	99.3	100.8	98.7	83.5
Սեպտեմբեր	98.8	100.8	98.0	91.4
2001 թ. հունվար-սեպտեմբերը 2000 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	103.3	100.1	102.4	110.9

IV. Սղաճ

ժամանակաշրջան	*1999*	*2000*	*2001*	*2001*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.0	1.9	4.6	4.6
Փետրվար	0.0	0.1	-0.9	3.6
Մարտ	-0.6	-0.4	0.02	3.7
Ապրիլ	0.4	-0.8	-0.1	3.6
Մայիս	0.5	-0.3	1.6	5.2
Հունիս	0.0	-0.3	-1.3	3.8
Հուլիս	-3.2	-2.0	-2.7	1.0
Օգոստոս	-0.9	-1.3	-0.7	0.3
Սեպտեմբեր	0.3	0.3	-1.2	-0.8
Հոկտեմբեր	0.5	0.0		
Նոյեմբեր	0.2	0.9		
Դեկտեմբեր	1.0	2.4		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	0.4		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	0.6	-0.8		

** Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:*
*** Մեծողական՝ ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գնահատումների:*

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն դրամ)

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ*
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական արժե-կտրոնային պարտատոմսեր	պետ. արժեթղթերի ճեղքվածքոտ	ընդամենը	հանրապետության բյուջեի միջոցներ դրամով	հանրապետության բյուջեի արտարժույթով	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ՀՀ սոցապ. պետ-ական կամ կիսկմնդ միջոցներ	ընդամենը	
2000	1751	8641	-96	10296	935	158	20	889	2	2004	8292
2001											
Հունվար	1446	8534	-68	9911	3258	157	18	1000	144	4577	5334
Փետրվար	1295	8208	-49	9454	4756	175	22	1230	0	6184	3270
Մարտ	1021	8740	-54	9707	3156	148	20	1176	6	4506	5201
Ապրիլ	822	9011	-38	9795	1376	175	5	1058	30	2644	7151
Մայիս	811	8478	-23	9265	1882	179	14	882	5	2962	6303
Հունիս	454	8369	-10	8814	2090	246	11	711	1	3058	5756
Հուլիս	503	8615	-33	9085	1720	150	8	898	29	2805	6280
Օգոստոս	326	8576	-27	8875	2208	149	4	763	2	3126	5749
Սեպտեմբեր	1225	9376	-120	10481	2497	132	4	531	6	3171	7311

** ՀՀ կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:*

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	2000	Հ - 01	Փ - 01	Մ - 01	Ա - 01	Մ - 01	Հ - 01	Հ - 01	Օ - 01	Ս - 01
Մնացորդներ ժամանակահատվածի վերջի դրությամբ										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	**60531**	**57403**	**56344**	**55288**	**54829**	**56666**	**56885**	**59432**	**62566**	**62799**
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**91122**	**86475**	**84080**	**89698**	**91415**	**92381**	**98425**	**97755**	**99183**	**97251**
Կառավարություն	9301	5905	3720	5556	4344	4687	4808	5065	5699	5674
Հանրապետական կառավարություն	9373	6124	3802	5691	4565	4882	4964	5198	5812	5825
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-2	-144	0	-6	-30	-5	-1	-29	-2	-6
Տեղական կառավարման մարմիններ	-70	-75	-82	-129	-191	-191	-156	-104	-111	-144
Տնտեսություն	109319	109455	107711	107746	109464	107692	108638	106936	107465	108447
Ջեռնարկ. և կազմակերպություն	63968	64712	64089	64680	65128	62437	63895	63609	65113	65978
որից՝ կուտակված տոկոսներ	2496	2545	2605	3113	3387	4012	4051	3982	4251	4551
Տնտեսության այլ ճյուղեր	45351	44743	43622	43066	44336	45255	44743	43327	42352	42469
որից՝ կուտակված տոկոսներ	2784	3031	2406	2082	2151	2311	2198	1862	1759	1707
Զուտ այլ ակտիվներ	-27498	-28885	-27351	-23604	-22393	-19998	-15021	-14246	-13981	-16870
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	**76722**	**67101**	**65715**	**65057**	**67808**	**68878**	**71420**	**72576**	**74198**	**75235**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	**150599**	**142817**	**139288**	**143831**	**145069**	**147790**	**154342**	**156092**	**160539**	**158728**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	**151653**	**143878**	**140424**	**144986**	**146244**	**149047**	**155310**	**157187**	**161749**	**160050**
Շրջանառությունում կանխիկ դրամ	59486	48128	47351	46905	48550	50564	52246	53779	56394	54305
Ցպահանջ ավանդներ[5]	11909	13234	12324	12164	13100	12249	12735	13345	12085	14894
որից՝ կուտակված տոկոսներ	138	163	174	191	215	228	191	222	250	249
Ժամկետային. խնայ. և արտարժ. ավ.	80259	82516	80749	85918	84594	86234	90330	90064	93270	90851
որից՝ կուտակված տոկոսներ	917	898	962	964	960	1029	777	873	960	1073
այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	74774	76596	74513	79710	78190	79898	83642	84327	87239	84483
որից՝ կուտակված տոկոսներ	897	880	940	935	929	986	720	810	898	990
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**30235**	**-3128**	**-1059**	**-1056**	**-459**	**1837**	**219**	**2547**	**3134**	**233**
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**11964**	**-4647**	**-2395**	**5618**	**1717**	**966**	**6044**	**-670**	**1428**	**-1932**
Կառավարություն	-6067	-3396	-2185	1836	-1212	343	121	257	634	-25
Հանրապետական կառավարություն	-6510	-3249	-2322	1889	-1126	317	82	234	614	13
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-310	142	-144	6	24	-25	-4	28	-27	4
Տեղական կառավարման մարմիններ	-133	5	7	47	62	0	-35	-52	7	33
Տնտեսություն	19192	136	-1744	35	1718	-1772	946	-1702	529	982
Ջեռնարկ. և կազմ.	12278	744	-623	591	448	-2691	1458	-286	1504	865
որից՝ կուտակված տոկոսներ	22	49	60	508	274	625	39	-69	269	300
Տնտեսության այլ ճյուղեր	6914	-608	-1121	-556	1270	919	-512	-1416	-975	117
որից՝ կուտակված տոկոսներ	236	247	-625	-324	69	160	-113	-336	-103	-52
Զուտ այլ ակտիվներ	-1161	-1387	1534	3747	1211	2395	4977	775	265	-2889
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	**20434**	**-9620**	**-1386**	**-658**	**2751**	**1070**	**2542**	**1156**	**1622**	**1037**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	**42054**	**-7782**	**-3529**	**4543**	**1238**	**2721**	**6552**	**1751**	**4447**	**-1811**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	**42199**	**-7775**	**-3454**	**4562**	**1258**	**2803**	**6263**	**1877**	**4562**	**-1699**
Շրջանառությունում կանխիկ դրամ	16876	-11358	-777	-447	1646	2014	1682	1533	2615	-2089
Ցպահանջ ավանդներ[5]	2292	1325	-910	-160	936	-851	486	610	-1260	2809
որից՝ կուտակված տոկոսներ	12	25	11	17	24	13	-37	31	28	-1
Ժամկետային. խնայ. և արտարժ. ավ.	23032	2257	-1767	5169	-1324	1640	4096	-266	3206	-2419
որից՝ կուտակված տոկոսներ	134	-19	64	2	-4	69	-252	96	87	113
այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	21750	1822	-2083	5197	-1520	1708	3744	685	2912	-2756
որից՝ կուտակված տոկոսներ	130	-17	60	-5	-6	57	-266	90	88	92
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**99.8**	**-5.2**	**-1.8**	**-1.9**	**-0.8**	**3.4**	**0.4**	**4.5**	**5.3**	**0.4**
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**15.1**	**-5.1**	**-2.8**	**6.7**	**1.9**	**1.1**	**6.5**	**-0.7**	**1.5**	**-1.9**
Կառավարություն	-39.5	-36.5	-37.0	49.4	-21.8	7.9	2.6	5.3	12.5	-0.4
Հանրապետական կառավարություն	-41.0	-34.7	-37.9	49.7	-19.8	6.9	1.7	4.7	11.8	0.2
Տեղական կառավարման մարմիններ	-65.5	7.1	9.3	57.3	48.1	0	-18.3	-33.3	6.7	29.7
Տնտեսություն	21.3	0.1	-1.6	0.03	1.6	-1.6	0.9	-1.6	0.5	0.9
Ջեռնարկ. և կազմ.	23.8	1.2	-1.0	0.9	0.7	-4.1	2.3	-0.4	2.4	1.3
Տնտեսության այլ ճյուղեր	18.0	-1.3	-2.5	-1.3	2.9	2.1	-1.1	-3.2	-2.3	0.3
Զուտ այլ ակտիվներ	-4.4	-5.0	5.3	13.7	5.1	10.7	24.9	5.2	1.9	-20.7
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	**36.3**	**-12.5**	**-2.1**	**-1.0**	**4.2**	**1.6**	**3.7**	**1.6**	**2.2**	**1.4**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	**38.7**	**-5.2**	**-2.5**	**3.3**	**0.9**	**1.9**	**4.4**	**1.1**	**2.8**	**-1.1**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	**38.6**	**-5.1**	**-2.4**	**3.2**	**0.9**	**1.9**	**4.2**	**1.2**	**2.9**	**-1.1**
Շրջանառությունում կանխիկ դրամ	39.6	-19.1	-1.6	-0.9	3.5	4.1	3.3	2.9	4.9	-3.7
Ցպահանջ ավանդներ[5]	23.8	11.1	-6.9	-1.3	7.7	-6.5	4.0	4.8	-9.4	23.2
Ժամկետային. խնայ. և արտարժ. ավ.	40.2	2.8	-2.1	6.4	-1.5	1.9	4.7	-0.3	3.6	-2.6
այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	41.0	2.4	-2.7	7.0	-1.9	2.2	4.7	0.8	3.5	-3.2

[1] ԶԱՄ-ը ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ը հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ԶԱՄ-ը՝ փաստացի փոխարժեքով:

[2] ԿԲ ԶԱՄ-ը հաշվարկված են նոր ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=552.18 դրամ, 1 SDR=1.3029 ԱՄՆ դոլար, 1 EUR=0.9305 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի=264.15 ԱՄՆ դոլար:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	2000	Հ-01	Փ-01	Մ-01	Ա-01	Մ-01	Հ-01	Հ-01	Օ-01	Ս-01
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1, 2]	***74783***	***71340***	***70143***	***66005***	***64969***	***64237***	***66775***	***68381***	***71415***	***71845***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-2393***	***-6600***	***-9717***	***-4575***	***-291***	***-544***	***-71***	***823***	***-1567***	***-281***
Կառավարություն	8292	5334	3270	5201	7151	6303	5756	6280	5749	7311
Հանրապետական կառավարություն	8294	5478	3270	5207	7181	6308	5757	6309	5751	7317
այդ թվում՝ ԾԻԳ-երի միջոցներ	-889	-1000	-1230	-1176	-1058	-882	-711	-898	-763	-531
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-2	-144	0	-6	-30	-5	-1	-29	-2	-6
Բանկեր	3332	2495	1650	2454	3437	2230	3794	4625	3716	4639
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	0	0	0	429	1262	0	1169	1775	416	1414
ավանդներ (-)	0	0	0	0	0	-170	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-14017	-14429	-14637	-12230	-10879	-9077	-9621	-10082	-11032	-12231
ՓՈՂԻ ԲԱԶԱ *(միջինացված)*[3]	***73097***	***66171***	***62706***	***62601***	***65553***	***65301***	***67214***	***69412***	***70470***	***72463***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***72390***	***64740***	***60426***	***61430***	***64678***	***63693***	***66704***	***69204***	***69848***	***71564***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	61873	51107	49525	49020	50725	52979	53918	55892	58441	56759
Պարտադիր պահուստ. (դրամով)	10350	13135	10739	12229	13750	10539	12604	13134	11244	14634
Այլ հաշիվներ	167	498	162	181	203	175	182	178	163	171
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***22167***	***-3443***	***-1197***	***-4138***	***-1036***	***-732***	***2538***	***1606***	***3034***	***430***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-3630***	***-4207***	***-3117***	***5142***	***4284***	***-253***	***473***	***894***	***-2390***	***1286***
Կառավարություն	-14	-2958	-2064	1931	1950	-848	-547	524	-531	1562
Հանրապետական կառավարություն	-113	-2816	-2208	1937	1974	-873	-551	552	-558	1566
այդ թվում՝ ԾԻԳ-երի միջոցներ	-726	111	230	-54	-118	-176	-171	187	-135	-232
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-99	142	-144	6	24	-25	-4	28	-27	4
Բանկեր	1980	-837	-845	804	983	-1207	1564	831	-909	923
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-399	0	0	429	833	-1262	1169	606	-1359	998
ավանդներ (-)	-40	0	0	0	0	170	-170	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-5596	-412	-208	2407	1351	1802	-544	-461	-950	-1199
ՓՈՂԻ ԲԱԶԱ *(միջինացված)*[3]	***19125***	***-6926***	***-3465***	***-105***	***2952***	***-252***	***1913***	***2198***	***1058***	***1993***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***18537***	***-7650***	***-4314***	***1004***	***3248***	***-985***	***3011***	***2500***	***644***	***1716***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	16391	-10766	-1582	-505	1705	2254	939	1974	2549	-1682
Պարտադիր պահուստ. (դրամով)	2389	2785	-2396	1490	1521	-3211	2065	530	-1890	3390
Այլ հաշիվներ	-243	331	-336	19	22	-28	7	-4	-15	8
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***42.1***	***-4.6***	***-1.7***	***-5.9***	***-1.6***	***-1.1***	***4.0***	***2.4***	***4.4***	***0.6***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-293.5***	***-175.8***	***-47.2***	***52.9***	***93.6***	***-86.9***	***86.9***	***1259.2***	***-290.4***	***82.1***
Կառավարություն	-0.2	-35.7	-38.7	59.1	37.5	-11.9	-8.7	9.1	-8.5	27.2
Հանրապետական կառավարություն	-1.3	-34.0	-40.3	59.2	37.9	-12.2	-8.7	9.6	-8.8	27.2
այդ թվում՝ ԾԻԳ-երի միջոցներ	-45.0	12.5	23.0	-4.4	-10.0	-16.6	-19.4	26.3	-15.0	-30.4
Բանկեր	146.4	-25.1	-33.9	48.7	40.1	-35.1	70.1	21.9	-19.7	24.8
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-100.0	0	0	100.0	194.2	-100.0	100.0	51.8	-76.6	239.9
ավանդներ (-)	-100.0	0	0	0	0	100.0	-100.0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-66.5	-2.9	-1.4	16.4	11.0	16.6	-6.0	-4.8	-9.4	-10.9
ՓՈՂԻ ԲԱԶԱ *(միջինացված)*[3]	***35.4***	***-9.5***	***-5.2***	***-0.2***	***4.7***	***-0.4***	***2.9***	***3.3***	***1.5***	***2.8***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***34.4***	***-10.6***	***-6.7***	***1.7***	***5.3***	***-1.5***	***4.7***	***3.7***	***0.9***	***2.5***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	36.0	-17.4	-3.1	-1.0	3.5	4.4	1.8	3.7	4.6	-2.9
Պարտադիր պահուստ. (դրամով)	30.0	26.9	-18.2	13.9	12.4	-23.4	19.6	4.2	-14.4	30.1
Այլ հաշիվներ	-59.3	198.2	-67.5	11.7	12.2	-13.8	4.0	-2.2	-8.4	4.9

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ը ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[2] ԶԱՄ-ը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 552.18 դրամ, 1 SDR = 1.3029 ԱՄՆ դոլար, 1 EUR = 0.9305 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 264.15 ԱՄՆ դոլար
[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ԱՄՆ դոլար)

Ամսաթիվը	*2000*	*2001*								
	Դ[3,4]	Հ[4]	Փ[4]	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս
Համախառն միջազգային պահուստներ[1]										
(առանց սեփականաշն. միջոցների)	314.1	304.5	301.5	293.7	293.0	301.5	304.9	307.5	314.1	316.8
Համախառն միջազգային պահուստներ[1]	330.5	326.0	326.3	324.0	319.5	303.7	312.7	312.3	322.4	324.0
այդ թվում՝										
Մոնետար ոսկի	12.2	11.8	11.7	11.6	11.8	12.2	12.1	11.9	12.3	13.1
SDR ԱՄՀ-ում	21.5	19.6	19.6	19.8	19.6	18.5	16.6	14.7	12.5	12.5
Արտարժույթ[2]	296.8	294.6	294.9	292.6	288.1	272.9	283.9	285.7	297.7	298.3

[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված չեն ԿԲ-ում եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում SDR-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2000թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ-ի կողմից սահմանված 1 SDR = 1.3029 $ փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով, դեկտեմբերի համախառն միջազգային պահուստների ցուցանիշները տարբերվում են ՀՀ ԿԲ նախկին հրապարակումների համապատասխան ցուցանիշներից:

[4] Ոսկին հաշվարկված է փոփոխված գնով, որի պատճառով 2000թ. դեկտեմբեր և 2001թ. հունվար, փետրվար ամիսների համախառն միջազգային պահուստների ցուցանիշները տարբերվում են ՀՀ ԿԲ նախկին հրապարակումների համապատասխան ցուցանիշներից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

	2000[3]	*2001*								
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս
Վարկեր[1]										
Իրավաբանական անձանց										
ՀՀ դրամով	28.1	33.9	35.1	22.0	37.4	34.8	30.5	33.2	29.4	25.6
Արտարժույթով	31.8	26.1	25.7	27.0	29.4	27.3	22.1	24.8	25.9	26.3
Ֆիզիկական անձանց										
ՀՀ դրամով	36.8	27.6	36.4	31.7	24.3	24.2	29.6	31.9	32.6	29.6
Արտարժույթով	39.3	38.8	35.4	35.1	33.5	33.6	35.0	33.0	34.7	36.8
Ավանդներ[1]										
Իրավաբանական անձանցից										
ՀՀ դրամով	19.3	21.9	22.0	21.5	14.1	17.4	15.1	23.4	11.8	18.0
Արտարժույթով	12.6	5.8	15.8	12.6	12.6	12.9	-	10.5	11.9	8.1
Ֆիզիկական անձանցից										
ՀՀ դրամով	19.1	20.8	22.2	20.1	21.8	22.4	22.6	20.6	19.3	19.5
Արտարժույթով	15.9	11.2	13.4	13.7	13.4	12.8	12.5	11.2	11.8	11.9
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	25.0	25.0	25.0	23.0	21.0	21.0	16.0	16.0	15.0	15.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը[2]	25.4	26.0	23.7	24.0	24.1	19.3	18.9	17.7	17.7	17.7
Ամսական սղաճ	0.4	4.6	-0.9	0.02	-0.1	1.6	-1.3	-2.7	-0.7	-1.2

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

** Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:*

*** Ներկայացված է 3-6 - ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը: Օգոստոս, սեպտեմբեր ամիսների համար ներկայացված է 6-9 - ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը: Այս ցուցանիշները տարբերվում են ՀՀ ԿԲ նախկին հրապարակումների ցուցանիշներից, քանզի այս բաժնում նախկինում ներկայացվել են այլ ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունը:*

**** Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:*

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն դրամ)

Ժամկետ	*Ավանդի ծավալ**	*Տոկոսադրույք*	*Վարկի ծավալ**	*Տոկոսադրույք*
2000				
Դեկտեմբեր	50	8	3608	45
2001				
Հունվար	-	-	3269	45
Փետրվար	-	-	391	45
Մարտ	-	-	1616	45
Ապրիլ	-	-	-	-
Մայիս	320	8	-	-
Հունիս	-	-	-	-
Հուլիս				
Օգոստոս	-	-	300	35
Սեպտեմբեր	-	-	-	-

** Մարումները հանված չեն:*

ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն դրամ)

Ժամկետ	*Ռեպո համաձայն. ծավալը **	*Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը*	*Հակադարձ ռեպո համաձայն. ծավալը **	*Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը*
2000				
Դեկտեմբեր	-	-	-	-
2001				
Հունվար	-	-	-	-
Փետրվար	-	-	-	-
Մարտ	429	23,0	-	-
Ապրիլ	1262	22,1	-	-
Մայիս	-	-	-	-
Հունիս	1169	18,0	-	-
Հուլիս	1775	16,0		
Օգոստոս	416	16,0	-	-
Սեպտեմբեր	1414	15,0	-	-

** Մարումները հանված չեն:*

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ	Հ 01	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս
01	553.13	-	554.29	545.94	-	-	555.57	-	553.67	-
02	-	-	553.74	544.63	544.17	549.00	-	554.63	553.36	-
03	-	552.18	-	-	545.48	548.78	-	554.21	553.49	554.59
04	553.13	552.18	-	-	546.41	549.45	554.81	555.05	-	553.60
05	554.53	553.70	553.74	541.82	546.58	-	555.52	-	-	554.06
06	555.93	-	553.39	541.82	547.90	-	555.52	554.12	553.49	553.95
07	555.93	-	552.86	542.04	-	550.09	555.75	-	552.89	554.23
08	555.48	552.65	552.20	-	-	550.76	556.08	-	552.89	-
09	-	550.16	552.37	542.55	547.56	-	--	554.59	552.89	-
10	-	549.98	-	-	547.78	551.23	-	554.52	554.00	553.66
11	555.81	550.67	-	-	548.70	553.64	555.56	553.46	-	554.42
12	556.55	551.61	552.69	543.83	548.20	-	555.05	553.40	-	554.77
13	557.12	-	552.52	545.95	548.13	-	554.56	553.58	554.00	554.77
14	556.47	-	552.19	549.26	-	553.89	554.67	-	554.00	553.89
15	555.62	554.14	552.05	549.39	-	554.30	554.67	-	554.00	-
16	-	556.30	552.05	550.43	548.26	554.42	-	553.44	554.30	-
17	-	554.43	-	-	548.30	555.62	-	553.51	554.30	553.81
18	555.62	555.17	-	-	548.27	555.43	554.86	553.51	-	553.92
19	555.25	554.57	552.05	548.90	547.35	555.43	554.86	554.32	-	553.32
20	555.25	-	552.05	548.65	548.71	-	555.33	554.45	554.87	553.93
21	555.08	-	551.84	548.20	-	556.30	555.43	-	556.00	-
22	555.08	553.16	551.65	548.01	-	555.99	555.03	-	556.50	553.93
23	-	553.66	551.65	547.59	548.50	556.17	555.03	554.32	556.50	-
24	-	553.88	551.65	-	-	555.38	-	553.71	556.50	553.93
25	553.94	552.58	-	-	548.61	555.38	555.80	553.90	556.50	554.09
26	553.94	555.58	551.79	546.35	548.17	555.38	555.61	553.90	-	554.09
27	551.86	-	550.02	545.79	548.71	-	555.11	554.22	556.50	554.09
28	551.86	-	548.35	545.56	548.71	-	554.55	554.22	554.65	554.14
29	550.52	555.76	-	545.30	548.71	555.38	554.11	-	554.65	554.14
30	552.18	555.48	-	544.68	548.57	554.68	554.11	554.27	555.00	554.14
31	552.18	554.29	-	544.68	-	556.23	-	553.85	555.00	-
ժամանակահատ-վածի վերջ	552.18	554.29	548.35	544.68	548.57	556.23	554.11	553.85	555.00	554.14
ժամանակահատ-վածի միջին	554.45	553.43	552.15	545.97	547.81	553.77	555.11	554.05	554.58	554.07

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(30 սեպտեմբերի 2001 թ. դրությամբ)

(հազար ՀՀ դրամ)

	Հավելված	*30.09.01 դրությամբ*	*30.06.01 դրությամբ*
Ակտիվներ			
Ակտիվներ ոսկով և արտարժույթով			
Ոսկի	1	7 255 854	6 752 379
ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ	3	71 127 727	73 443 375
Արտարժութային ակտիվներ	2	166 323 142	158 478 844
Ակտիվներ ՀՀ դրամով			
Պետական արժեթղթեր	4	12 166 560	10 202 287
Վարկեր Կառավարությանը		0	0
Վարկեր և ավանդներ բանկերում	5	4 712 845	3 830 497
Այլ ակտիվներ	6	1 356 229	1 392 287
Հիմնական միջոցներ	7	3 647 099	3 767 372
Ընդամենը		**266 589 456**	**257 867 041**
Պարտավորություններ			
Պարտավորություններ արտարժույթով			
Բանկեր		3 525 007	2 972 803
ԱՄՀ	3	82 232 014	83 354 938
Հայաստանի կառավարություն	10	4 642 178	5 273 595
Այլ	8	15 748	8 971
Պարտավորություններ ՀՀ դրամով			
Թղթադրամներ և մետաղադրամներ		56 759 299	53 918 414
Հայաստանի կառավարության ավանդներ և հաշիվներ	10	2 501 140	2 100 821
Բանկերի ավանդներ և հաշիվներ		14 634 251	12 603 619
Այլ ավանդներ և հաշիվներ		175 346	180 224
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	3	78 846 693	79 504 862
Այլ պարտավորություններ	9	1 686 062	1 502 247
Ընդամենը		**245 017 738**	**241 420 494**
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ		100 000	100 000
Գլխավոր պահուստ		7 868 349	7 868 349
Վերագնահատման պահուստներ		8 573 995	5 380 964
Շահույթ		5 029 374	3 097 234
Ընդհանուրը		**266 589 456**	**257 867 041**

Սույն հաշվեկշռի հավելվածները կազմում են նրա բաղկացուցիչ մասը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահ

ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Հավելված 1. Ոսկի

(հազար ՀՀ դրամ)

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
Ոսկի	0	0
Ոսկով ավանդներ	7 246 543	6 727 762
Հաշվեգրված տոկոսներ	9 311	24 617
Ընդամենը	**7 255 854**	**6 752 379**

Հավելված 2. Արտարժութային ակտիվներ

(հազար ՀՀ դրամ)

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
Կանխիկ արտարժույթ	746 461	946 803
Արտարժույթով արժեթղթեր	7 259 069	11 508 595
Արտարժույթով ավանդներ և հաշիվներ	101 378 622	90 189 625
Հաշվեգրված տոկոսներ	729 534	800 965
Հավատարմագրային կառավարման հաշիվներ	56 055 341	54 931 524
Արտարժույթով ներդրումներ	830	766
Դեբիտորական պարտքեր արտարժույթով	153 285	100 566
Ընդամենը	**166 323 142**	**158 478 844**

Հավելված 3. ՀՀ ԿԲ գործառնությունները Արժույթի միջազգային հիմնադրամի հետ

ԱՄՀ-ի ակտիվներ

(հազար ՀՀ դրամ)

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
Ակտիվներ SDR-ով	6 948 854	9 200 464
Հաշվեգրված տոկոսներ	41 073	60 031
ԱՄՀ-ին անդամակցություն	64 137 800	64 182 880
Ընդամենը	**71 127 727**	**73 443 375**

ՀՀ դրամով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
ԱՄՀ-ի թիվ 1 հաշիվ	196 796	196 796
ԱՄՀ-ի թիվ 2 հաշիվ	3 287	3 315
ԱՄՀ-ի արժեթղթերի հաշիվ	78 334 148	79 935 638
ԱՄՀ-ի հանդեպ ՀՀ դրամով պարտավորությունների կարգավորման հաշիվ	312 462	(630 887)
Ընդամենը	**78 846 693**	**79 504 862**

SDR-ով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
SDR-ով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	82 028 412	83 263 334
Հաշվեգրված տոկոսներ	203 602	91 604
Ընդամենը	**82 232 014**	**83 354 938**

Հավելված 4. Պետական արժեթղթեր

(հազար ՀՀ դրամ)

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
Ձեռք բերված արժեթղթեր	10 753 001	9 033 576
Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր	1 413 559	1 168 711
Ընդամենը	**12 166 560**	**10 202 287**

Հավելված 5. Վարկեր և ավանդներ բանկերում

(հազար ՀՀ դրամ)

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
Բանկերին տրամադրված վարկեր	3 225 000	2 625 000
Ռեպո համաձայնագրեր	1 413 559	1 168 711
Ընդամենը	**4 638 559**	**3 793 711**
Վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստաֆոնդ	0	0
Զուտ վարկեր	4 638 559	3 793 711
Հաշվեգրված տոկոսներ	74 286	36 786
Ընդամենը	**4 712 845**	**3 830 497**

Հավելված 6. Այլ ակտիվներ

(հազար ՀՀ դրամ)

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
Այլ ներդրումներ ՀՀ դրամով	147 297	147 297
Դեբիտորներ	546 157	542 767
Դրամի թողարկման ծախսերի կապիտալացված արժեք	312 194	273 187
Դրամագիտական արժեքներ	379 437	456 149
Դրամագիտական արժեքների պահուստաֆոնդ	(163 816)	(163 816)
Զուտ դրամագիտական արժեքներ	215 621	292 333
Այլ ակտիվներ	134 960	136 703
Ընդամենը	**1 356 229**	**1 392 287**

Հավելված 7. Հիմնական միջոցներ

(հազար ՀՀ դրամ)

	Հող, շենք և շինություններ	*Գույք, սարքավորումներ և այլ*	*Ընդամենը*
Արժեք կամ գնահատում			
Առ 1-ը հուլիսի 2001 թ.	2 736 166	3 156 643	5 892 809
Ավելացում	90 836	90 981	181 817
Օտարում*	(97 797)	(46 681)	(144 478)
30-ը սեպտեմբերի 2001թ. դրությամբ	2 729 205	3 200 943	5 930 148
Մաշվածք			
Առ 1-ը հուլիսի 2001 թ.	331 271	1 794 166	2 125 437
Կուտակված մաշվածք	20 856	138 140	158 996
Օտարում**	-	(1 384)	(1 384)
30-ը սեպտեմբերի 2001թ. դրությամբ	352 127	1 930 922	2 283 049
Մնացորդային արժեք			
30-ը հունիսի 2001թ. դրությամբ	2 404 895	1 362 477	3 767 372
30-ը սեպտեմբերի 2001թ. դրությամբ	2 377 078	1 270 021	3 647 099

** 144 478 հազար ՀՀ դրամ գումարը բաղկացած է.*

1. Զուտ օտարում	*97 797*
2. Այլ կազմակերպություններում ներդրման հետ կապված օտարում	*46 681*

*** 1 384 հազար ՀՀ դրամ գումարը բաղկացած է.*

1. Զուտ օտարում	*0*
2. Այլ կազմակերպություններում ներդրման հետ կապված օտարում	*1 384*

Հավելված 8. Այլ պարտավորություններ արտարժույթով

(հազար ՀՀ դրամ)

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
Արտարժույթով այլ պարտավորություններ ՀՀ ռեզիդենտների նկատմամբ	1 960	1 798
Կրեդիտորներ արտարժույթով	7 414	7 111
Հաշվեգրված տոկոսներ	6 374	62
Ընդամենը	**15 748**	**8 971**

Հավելված 9. Այլ պարտավորություններ ՀՀ դրամով

(հազար ՀՀ դրամ)

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
Տարբեր կրեդիտորներ	17 389	28 665
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով	1 413 559	1 168 711
Միջհաճրապետական պարտավորություններ	19 707	19 707
Հաշվեգրված տոկոսներ	7 090	9 473
Այլ պարտավորություններ	228 317	275 691
Ընդամենը	**1 686 062**	**1 502 247**

Հավելված 10. Պարտավորություններ Հայաստանի կառավարության հանդեպ

(հազար ՀՀ դրամ)

	30.09.01 դրությամբ	*30.06.01 դրությամբ*
Պարտավորություններ արտարժույթով		
Հայաստանի կառավարություն	4 642 178	5 273 595
Ընդամենը	**4 642 178**	**5 273 595**
Պարտավորություններ ՀՀ դրամով		
Հայաստանի կառավարության հաշիվներ և ավանդներ	2 501 140	2 100 821
Ընդամենը	**2 501 140**	**2 100 821**

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

•
ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԿԱՅԱԳԻՐ ԹԻՎ 411

•
ՀՀ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

Երևան 10,
Վ. Սարգսյան փող. 6
http://www.CBA.am

•
Չափսը՝ 60 x 84 1/8:
5.58 պայմ. տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 140:

•
ՀՀ ԿԲ
հրատարակչական բաժին:

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2001